

## **ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՂՐԻ ՇՈՒՐՋ** **Սարգիս Հարությունյան**

Թեև Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ծավալվող զարգացումները դեռևս չունեն կոնկրետ արդյունքներ, սակայն միջազգային ներկա իրավիճակն ու հարակից գործընթացները թույլ են տալիս հիմնախնդրի առնչությամբ առանձնացնել մի շարք գործոններ, որոնք, մասնավորապես, սկսել են կասկածի տակ դնել Ղարաբաղյան խնդրի կարգավորման հիմնական ձևաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի հետագա գործունեությունը:

### **Ռուս-վրացական հակամարտություն**

Եթե կարճաժամկետ հատվածում ռուս-վրացական հակամարտության ծավալման հիմքում կարելուր տեղ են գրավում երկու երկրների ներքաղաքական հաշվարկները, ապա միջնաժամկետ հեռանկարում հակամարտության շարժիչ ուժն է հանդիսանալու Վրաստանի նպատակը՝ ինտեգրվել եվրաստլանտյան համակարգեր, առաջին հերթին ՆԱՏՕ:

Հակամարտության օգնությամբ Սահակաշվիլու Միացյալ ազգային շարժում կուսակցությունը կարողացավ հոկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններին ստանալ ձայների ավելի քան 55%-ը: Ռուսաստանում հակամարտությունն օգտագործվում է 2007թ. խորհրդարանական եւ, ըստ ամենայնի, նաեւ 2008թ. նախագահական ընտրություններին ընդառաջ՝ պուլտինյան թիմի վարկանիշը բարձրացնելու համար (սեպտեմբերի առաջին կեսին Պուտինի վարկանիշը կազմում էր 32%, իսկ հոկտեմբերի սկզբին այն հասավ 37%-ի):

Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին Ռուսաստանի համար չի նշանակում սոսկ ազդեցության երկարաժամկետ կորուստ հարավկովկասյան այդ երկրում: Վրաստանի անդամակցությունը հյուսիսատլանտյան դաշինքին իր անմիջական հետեւանքները կունենա Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական փոխդասավորվածության վրա, իսկ ավելի գլոբալ՝ հետխորհրդային տարածքի իմաստով, այն կարող է հիմնարար ազդեցություն թողնել նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին քաղաքականությունների վրա՝ ի վնաս Ռուսաստանի:

ՀՀ ազգային անվտանգության առումով պետք է առանցքային համարել այն հետեւությունը, որ Վրաստանի հետագա ընթացքը դեպի

եվրաստլանտյան համակարգեր հանգեցնելու է Ադրբեջանի աշխարհա-  
ռազմավարական դիրքի արժեւորմանը Մոսկվայի համար՝ կապված  
Չարավային Կովկաս-Կասպից ծով-Կենտրոնական Ասիա գծում  
աշխարհաքաղաքական վերադասավորումների հետ: Այդ հանգամանքը չի  
կարող իր հետեւանքը չունենալ ղարաբաղյան զարգացումներում:

Մյուս կողմից՝ ռուս-ադրբեջանական մերձեցմանը կարող է նպաստել  
նաեւ իսլամական գործոնի ազդեցության աճը միջազգային քաղաքա-  
կանությունում: ԱՄՆ-Ռուսաստան հակասությունների ֆոնին Մոսկվայի  
համար նոր իմաստ է ստանում իսլամական աշխարհի հետ համագործակ-  
ցությունը, եւ այդ համատեքստում Ադրբեջանը կարող է դիտարկվել որպես  
հարմար միջնորդ Ռուսաստան-իսլամական աշխարհ հարաբերություն-  
ներում:

Չի կարելի վստահաբար ասել, թե նման զարգացման դեպքում,  
Ղարաբաղյան խնդրի առումով, Ռուսաստանը կբռնի միանշանակ ադրբե-  
ջանամետ դիրքորոշում: Նախ, Չայաստանում գտնվող ռուսական  
ռազմակայանը համարվում է տարածաշրջանում Մոսկվայի ազդեցության  
առաջնային լծակ: Մյուս կողմից՝ Ռուսաստանում խնդիր է համարվելու  
Ադրբեջանի նկատմամբ համապատասխան ճնշամիջոց չունենալը:

## **ՎՈՒԱՍ**

Միջազգային ասպարեզում եւ առաջին հերթին հետխորհրդային  
տարածքում աստիճանաբար ձգտում է ավելի ակտիվ գործել մի  
ծեւաչափ, որի շրջանակներում Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ  
կայացվող որոշումները կրում են միայն ադրբեջանամետ բնույթ:

Ինչպես հայտնի է, ՎՈՒԱՍ պետությունների նախաձեռնությամբ ՄԱԿ-ի  
Գլխավոր ասամբլեայում շրջանառության մեջ է դրվել բանաձեւի մի  
նախագիծ, որը վերաբերելով հետխորհրդային տարածքի «սառեցված  
հակամարտություններին»՝ առնչվում է նաեւ Ղարաբաղյան խնդրին:  
Վերջինիս առնչությամբ ՎՈՒԱՍ նախաձեռնությունների հիմքում հարկա-  
վոր է առանձնացնել առնվազն երկու հանգամանք:

Առաջին՝ նպատակ ունենալով հետխորհրդային տարածքում հանդես  
գալ որպես Ռուսաստանի ազդեցությունից դուրս գտնվող ինտեգրացիոն  
ազդեցիկ միավոր՝ ՎՈՒԱՍ-ը խնդիր է տեսնում ամրապնդել սեփական  
ինստիտուցիոնալ կարողությունները: Այսինքն՝ ՎՈՒԱՍ անդամ երկրներին  
վերաբերող կարեւորագույն հարցերի լուծմանն ուղղված համատեղ  
ջանքերը դիտարկվում են որպես կազմակերպության ամրապնդման  
միջոց:

Երկրորդ՝ Ղարաբաղյան խնդրին առնչվող ՎՈՒԱՄ-ի գործողություններում ոչ պակաս նշանակություն ունի նրա երկու անդամների՝ Ուկրաինայի եւ Ադրբեջանի միջեւ առկա ռազմական ու էներգետիկ համագործակցությունը: Եթե ուկրաինա-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցությունը սկսվում է 1990-ական թթ. սկզբից, ապա էներգետիկ առումով Ուկրաինայի համար Ադրբեջանը նոր կարելություն է ստանում հատկապես ռուս-ուկրաինական էներգետիկ խնդիրների եւ Ուկրաինայի էներգետիկ անվտանգության ապահովման համատեքստում՝ որպես էներգակիրներ մատակարարող կամ տարանցիկ նշանակություն ունեցող երկիր: 2006թ. սեպտեմբերի 7-8-ը Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոյի այցելությունը Բաքու, ադրբեջանա-ուկրաինական բանակցությունների օրակարգում էներգետիկ զգալի հատվածի առկայությունը, Ղարաբաղյան խնդրի կապակցությամբ Բաքվում Յուշչենկոյի արած ադրբեջանամետ հայտարարությունները վկայում են այդ մասին:

ՀՀ ազգային անվտանգության տեսակետից, կարելոր է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ ՎՈՒԱՄ ձեւաչափում խորացող վրաց-ադրբեջանական համագործակցությունը կարող է իր հետեւանքներն ունենալ հարավկովկասյան քաղաքականությունում՝ ընդհանրապես, եւ Հայաստան – Վրաստան հարաբերություններում՝ մասնավորապես:

Այդուհանդերձ, ՎՈՒԱՄ հետագա գործունեության առումով կարելոր նշանակություն ունեն Ուկրաինայում ընթացող ներքաղաքական զարգացումները, որոնցից էլ կախված են այդ երկրի արտաքին քաղաքական մոտեցումները: Մեծ է հավանականությունը, որ, օրինակ, Վիկտոր Յանուկովիչի հաղթանակի դեպքում ՎՈՒԱՄ-ը հայտնվի ճգնաժամի մեջ:

### **Խլամական գործոն**

Մերձավորարեւելյան վերջին զարգացումներում իսլամական գործոնը հանդես եկավ որպես տարածաշրջանում ուժերի վերադասավորման գլխավոր մեխանիզմ:

Այդ գործոնի նշանակությունը միջազգային հարաբերություններում միայն աճելու է: Միացյալ Նահանգների ու նրա դաշնակիցների խնդիրը՝ սահմանափակել Թեհրանի ազդեցությունը մերձավորարեւելյան գործերում, չի կարող լուծվել արեւմտյան ժողովրդավարության տարածման մեխանիզմով: Մյուս կողմից՝ առնվազն միջնաժամկետ հեռանկարում ազգայնականությունը մահմեդական երկրներում ի վիճակի չէ իրական մրցակից լինել իսլամական գործոնին: Հետեւաբար, նպատակ է դրվելու իրանական իսլամին հակադրել, օրինակ, սաուդական իսլամը: Այդ

պարագայում գրեթե անխուսափելի է, որ միջազգային հարաբերություններում իսլամական գործոնը, զոնե մասնակիորեն, հանդես չգա առավել հարձակողական ոճով:

Ադրբեջանը փորձում է օգտվել ստեղծված իրավիճակից: Ակտիվացնելով սեփական իսլամական քաղաքականությունը՝ պաշտոնական Բաքուն նպատակ է հետապնդում ղարաբաղյան զարգացումներում հօգուտ իրեն ապահովել մահմեդական երկրների դիվանագիտական, տեղեկատվական եւ տնտեսական աջակցությունը:

2006թ. հունիսի 19-21-ը Բաքվում կայացած Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների արտգործնախարարների 13-րդ կոնֆերանսի արդյունքում ընդունված եզրափակիչ կոմյունիկեում եւ Բաքվի հռչակագրում Չայաստանը միակ պետությունն է, որը նշվեց որպես «ազրեսոր»:

Նույն տրամաբանության ներքո է ընկնում Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Ալլահշյուքյուր Փաշազադեի օգոստոսի 23-ի հայտարարությունը եւ, ընդհանրապես, նրա ակտիվությունը իսլամական տեղեկատվական դաշտում: Նշենք, որ Փաշազադեն այդ օրը ոչ միայն սպառնաց ջիհադ հայտարարել Չայաստանին, այլեւ քննադատեց Իսրայելի քաղաքականությունը Լիբանանի նկատմամբ: Ավելի ուշ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդը բավական կոշտ արձագանքեց Չոռմի պապ Բենեդիկտոս 16-րդի՝ սեպտեմբերի 12-ի հայտնի ելույթին, որն իսլամական աշխարհում հակաքրիստոնեական գործողությունների պատճառ էր հանդիսացել:

### **Պանթյուրքական գործոն**

Անկարան իր արտաքին քաղաքականության մեջ վերստին սկսել է կարեւորել պանթյուրքական ուղղությունը: Թուրքական ռազմաքաղաքական ղեկավարության պատկերացմամբ՝ եվրոպական ուղղությամբ Թուրքիայի որոշ անհաջողությունները, Վաշինգտոնի հետ հարաբերություններում երբեմն-երբեմն ծագող խնդիրները, Մերձավոր Արեւելքում Թուրքիայի դերի վերստին կարեւորումը, նրա՝ դեպի Եվրոպա գնացող էներգահոսքերի առանցքային հանգույց դառնալը բավարար հիմք են կրկին անդրադառնալու պանթյուրքական գործոնին:

Տարածաշրջանային զարգացումներում պանթյուրքական գործոնի ազդեցությունը կարող է աճել եւս երկու պատճառով:

2006թ. հունիսին Ղազախստանի միանալը «Բաքու – Թբիլիսի – Ջեյհան» նավթամուղին եւ Ադրբեջանի հետ ռազմավարական համագործակցության մասին պայմանագրի ստորագրումը՝ տնտեսական ու

քաղաքական առումներով մեծացնելու են Աստանայի ներգրավվածությունը համաթյուրքական ձեւաչափում:

Պետք է ոչ պակաս կարելուր համարել նույն ձեւաչափում Թուրքիայի եւ Ուզբեկստանի՝ առաջին հերթին քաղաքական ոլորտում ընդլայնվող համագործակցությունը: 2005թ. ընթացքում ԱՄՆ–Ուզբեկստան կապի խզումը նպաստեց, որ թե՛ Անկարայում եւ թե՛ Տաշքենդում երկու երկրների միջեւ առկա համագործակցությունը կրկին ստանա առաջնային կարելուրություն:

Հինգ տարվա ընդմիջումից հետո այս սեպտեմբերի 18-20-ը թուրքական Կեմերե քաղաքում կայացավ 10-րդ միջազգային թյուրքական համաժողովը՝ ղուրուլթայը, որին մասնակցում էին թյուրքական բոլոր պետությունների, Ռուսաստանի Դաշնության թյուրքական սուբյեկտների եւ աշխարհի բազմաթիվ երկրների թյուրքական համայնքների մոտ 600 ներկայացուցիչներ: Համաժողովի եզրափակիչ փաստաթղթում վերստին դատապարտվել է Ադրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիան»: Ի դեպ, Կեմերեում ունեցած ելույթի ժամանակ Ալիեւ-կրտսերը հայտարարեց, թե «հայկական պետությունը, որը տարածքային առումով գտնվում է ադրբեջանական հողի վրա, [եւ որը] իր ժամանակին ստեղծվել է Երեւանի խանության ու նրան հարակից ադրբեջանական հողերի վրա, այսօր տարածքային պահանջներ է ներկայացնում Ադրբեջանին»:

Նախատեսվում է 2006թ. նոյեմբերի 17-ին Թուրքիայում անցկացնել թյուրքական պետությունների ղեկավարների գագաթաժողով:

Պանթյուրքական ձեւաչափում Ղարաբաղյան խնդիրը, այլ հարցերի հետ մեկտեղ, կարող է շրջանառության մեջ դրվել որպես թյուրքական համագործակցությանը խոչընդոտող հանգամանք: Այդ առումով լուրջ նշանակություն է ունենալու Թուրքիա–կենտրոնաասիական թյուրքական պետություններ գծում Ադրբեջանի կապող օդակ լինելը: Երկրորդ՝ պանթյուրքական ուղղության ընդհանուր ակտիվացումը կարող է միջազգային քաղաքականություն ներմուծել մի նոր հարթություն, ուր մեկ տրամաբանության ներքո կքննարկվեն Հյուսիսային Կիպրոսի թյուրքական ինքնահռչակ հանրապետության, Իրաքի թյուրքմենների, Ղարաբաղի, թուրք մսխեթցիների, Մոլդովայի գագաուզների եւ Ղրիմի թաթարների հարցերը: Չի բացառվում, որ վերոհիշյալ տրամաբանությունը պատճառ հանդիսանա նաեւ հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցում Անկարայի դիրքորոշման կոշտացման համար:

### **Չեղարկումներ**

Միջնաժամկետ հեռանկարում, վերը ներկայացված ուղղություններով հակահայկական միտումները միայն խորանալու են:

Հավանականություն կա, որ ավելի երկար ժամանակահատվածում՝ այդ միտումների պահպանման դեպքում, դրանք ի վերջո ընդունեն համակարգային բնույթ:

Հաշվի առնելով Հարավային Կովկասում ընթացող եւ սպասվող աշխարհաքաղաքական զարգացումները՝ պետք է ենթադրել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի շուրջ ներկայումս ստեղծված իրավիճակը, թերեւս, արտացոլում է Ղարաբաղյան հիմնախնդրի նոր փուլ մտնելու ընթացքը՝ մասամբ կապված նաեւ վերոհիշյալ գործոնների հետ:

Ղարաբաղյան խնդրի կարգավորման հիմնական ձեւաչափի հնարավոր ճգնաժամը կարող է իր հետ բերել նոր ձեւաչափերի ստեղծում կամ նախկինում երկրորդական բնույթ ունեցող ձեւաչափերի կարելուում, որոնք խնդրի հանգուցալուծման տեսանկյունից միգուցե չունենան վճռական ազդեցություն, սակայն կարող են դիվանագիտական եւ տեղեկատվական առումներով զգալի փոփոխություններ առաջացնել գոյություն ունեցող իրավիճակում:

Ըստ ամենայնի, ներկա փուլում, Ղարաբաղյան հիմնախնդրի առումով՝ Բաքվի նպատակը հենց դա է:

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ  
ՀԱՅ-ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ**  
*Արաքս Փաշայան*

Անկախություն ստանալուց ի վեր, մահմեդական շրջանակներում դեռևս կշիռ չունեցող հետխորհրդային Ադրբեջանը ձգտում էր ընդգծել իր պատկանելությունն իսլամական աշխարհին՝ փորձելով, ի թիվս այլ կոմպանների, իսլամական համերաշխության գաղափարն օգտագործել Ղարաբաղյան հարցում իսլամական պետությունների աջակցությունը ձեռք բերելու համար: Դեռևս 1992թ. Շրի Լանկայում Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Ալլահշյուքյուր Փաշազադեն հայտարարեց, որ ադրբեջանական ժողովրդի նկատմամբ անտարբերությունը հավասար է իսլամական համերաշխության պատվիրանների մոռացությանը:

Ադրբեջանի ջանքերն, անշուշտ՝ ոչ առանց Թուրքիայի աջակցության, տվեցին իրենց որոշակի արդյունքները: 1992-ից սկսած իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ), պարբերաբար դատապարտել է Հայաստանին՝ իբրև «ագրեսոր», Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող եւ Ադրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող երկիր: Մեկ անգամ չէ, որ Իսլամական կոնֆերանսը կոչ է արել մահմեդական պետություններին եւ միջազգային հանրությանը՝ «օգտագործել քաղաքական եւ տնտեսական ազդեցիկ միջոցներ՝ վերջ դնելու հայկական ագրեսիային եւ ադրբեջանական տարածքների բռնազավթմանը», «զերծ մնալ Հայաստանին սպառազինություններ տրամադրելուց»: Նման բանաձևերի օգտին քվեարկում են անգամ Հայաստանի հետ բարեկամական հարաբերություններ ունեցող իսլամական պետությունները: Իսկ իսլամական աշխարհի մի շարք երկրներ (Թուրքիա, Սաուդյան Արաբիա, Պակիստան, Բանգլադեշ) Հայաստանի հետ դիվանագիտական կապերի հաստատումը պայմանավորում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ:

Չնայած Ադրբեջանն, իր իսկ սահմանադրության համաձայն, աշխարհիկ պետություն է, երկրի իշխանությունները սեփական դիրքերն ամրապնդելու նպատակով օգտագործում են իսլամական գործունը թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Քաղաքական գործիչները՝ իշխանական, թե ընդդիմադիր, շատ դեպքերում դիմում են իսլամական հռետորականությանը: Արտաքին քաղաքականության մեջ

իսլամական ուղղությունը պահպանում է իր առաջնայնությունը: Ադրբեջանն այսօր ակտիվորեն համագործակցում է իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի հետ եւ համարվում է նրա ակտիվ անդամներից մեկը:

2006թ. Ադրբեջանում տեղի ունեցան ԻԿԿ երկու կարեւոր հանդիպումներ: Առաջինը հունիսի 19-21-ը արտաքին գործերի նախարարների կոնֆերանսն էր, որի արդյունքում ստորագրվեցին եզրափակիչ փաստաթուղթը եւ Բաքվի հռչակագիրը: Երկու փաստաթղթերում էլ Հայաստանն անվանված է «ագրեսոր»: Բաքվի հռչակագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածում մասնավորապես նշված է. «Մենք վերստին վճռականորեն դատապարտում ենք Հայաստանի Հանրապետության ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ եւ համառորեն կոչ ենք անում հայկական օկուպացիոն ուժերին անմիջապես, լրիվ եւ անվերապահ կերպով դուրս գալ Ադրբեջանի զավթված տարածքներից: Մենք կարծում ենք, որ հայ բնակիչների ապօրինի վերաբնակեցումը գրավյալ ադրբեջանական տարածքներում, ապօրինի տնտեսական գործունեությունը եւ բնական պաշարների շահագործումը գրավյալ տարածքներում վնաս են հասցնում խաղաղության գործընթացին: Մենք դատապարտում ենք ադրբեջանական մշակութային եւ պատմական հուշարձանների շարունակվող ոչնչացումը եւ պահանջում ենք, որ Հայաստանը Ադրբեջանին փոխհատուցի հասցված նյութական վնասի դիմաց՝ միջազգային իրավունքին համապատասխան: Մենք հայտարարում ենք մեր խորին անհանգստությունը գրավյալ տարածքներում վերջերս բռնկված զանգվածային հրդեհների կապակցությամբ եւ պահանջում ենք, որ օկուպացիոն ուժերն անհապաղ միջոցներ ձեռնարկեն էկոլոգիական աղետը կանխելու համար: Մենք դիմում ենք միջազգային հանրությանը՝ կոչ անելով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները հակամարտության խաղաղ կարգավորման համար: Մենք համառորեն կոչ ենք անում ԻԿԿ անդամ պետություններին աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին՝ ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության վերականգնման հարցում»:

Հատկանշական է, որ միջազգային առաջին կառույցը, որն անմիջապես արձագանքեց «գրավյալ տարածքներում» սկսված հրդեհներին, Իսլամական կոնֆերանսն էր: Սեպտեմբերի 11-ին Բաքվում նախագահ Ի.Ալիևի հետ հանդիպման ժամանակ ԻԿԿ գլխավոր քարտուղար Էքմելեդդին Իսանօղլուն վերջինիս տեղեկացրեց, որ հրդեհների վերաբերյալ ՄԱԿ բանաձեւի ընդունման հարցում ԻԿԿ-ն ոչ պակաս դերակատարություն է ունեցել, իսկ ինքն անձամբ է այդ մասին Քոֆի



Անանիմ նամակ ուղարկել: Նշենք, որ 2004թ. կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրված Թուրքիայի ներկայացուցիչ եւ իսլամական աշխարհում մեծ համարում ունեցող Է.Իսամօղլուն մեծապես աջակցում է միջազգային շրջանակներում ադրբեջանական PR-ին:

Ուշագրավ է նաեւ, որ Բաքվի կոնֆերանսի օրերին Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովը տարածեց ապատեղեկատվություն այն մասին, որ իսլամական պետությունները խզելու են իրենց հարաբերությունները Հայաստանի հետ, չնայած ներկայումս ՀՀ-ն բարեկամական հարաբերություններ ունի եւ համագործակցում է իսլամական մի շարք երկրների հետ:

Ստո երեք ամիս անց, սեպտեմբերի 9-12-ը, Բաքվում տեղի ունեցավ իսլամական պետությունների տուրիզմի նախարարների V կոնֆերանսը, որի բացմանը հանդես եկավ նախագահ Ի.Ալիեւը: Նրա ելույթը մասնավորապես նվիրված էր իսլամական աշխարհին սպառնացող մարտահրավերներին միասնաբար հակազդելու անհրաժեշտությանը: Այս համատեքստում Ալիեւը իսլամական աշխարհի ուշադրությունը մեկ անգամ եւս սեւեռեց Ղարաբաղյան խնդրի վրա: Հատկանշական է, որ իսլամական երկրների միջեւ տուրիզմի եւ բարեկամական հարաբերությունների զարգացմանը վերաբերող փաստաթղթում դատապարտվեց նաեւ Ադրբեջանի դեմ հայկական «ագրեսիան»: Իսկ ադրբեջանական աղբյուրները հանդիպման մասին խոսելիս առաջին հերթին ընդգծում էին ոչ թե տուրիզմի ոլորտում իսլամական երկրների ձեռքբերումները, այլ Ղարաբաղյան հարցը:

Պետք է ասել, որ ԻԿԿ-ն դեմ է, որպեսզի Ղարաբաղյան հարցը դասվի «սառեցված հակամարտությունների» շարքին, նաեւ գտնում է, որ խնդրի կարգավորմամբ պետք է զբաղվի ՄԱԿ-ը: Այս առումով, Ադրբեջանի նախագահ Ի.Ալիեւը մշտապես ընդգծում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության աջակցությունն Ադրբեջանին: Նշենք, որ Ադրբեջանն առաջարկել է 2007թ. Բաքվում անցկացնել «Ձանգվածային լրատվամիջոցների դերը հանդուրժողականության եւ փոխհամաձայնության հարցում» խորագրով ԻԿԿ կոնֆերանս, ինչին արդեն հավանություն է տրվել:

Հետաքրքրական է նաեւ հետեւյալ փաստը. 2006թ. սեպտեմբերի 3-ին Ստամբուլում պաշտոնապես բացվեց Երկխոսության եւ համագործակցության Իսլամական կոնֆերանսի երիտասարդական ֆորումի գրասենյակը, որը ստեղծվել է Ադրբեջանի երիտասարդական կազմակերպությունների ազգային ասամբլեայի առաջարկով: Ֆորումի հիմնադիր համագումարը տեղի էր ունեցել 2003թ. օգոստոսին Բաքվում: Ի դեպ, ֆորումի առաջին նախաձեռնություններից մեկն ադրբեջանական քարոզչության ոգով

գրված «Ղարաբաղ. փաստեր եւ հետեւանքներ» գիրքն է, որը «Հակամարտություններ եւ հումանիտար աղետներ ԻԿԿ երկրներում» շարքի առաջին հրատարակությունն է (այն բաժանվեց հունիսին Բաքվում տեղի ունեցած իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպման մասնակիցներին): Ֆորումի գլխավոր քարտուղարը Ադրբեջանի ներկայացուցիչ էլշադ Իսքանդերովն է:

Ադրբեջանցի վերլուծաբանների կարծիքով՝ Բաքուն ծրագրել է առաջիկայում սերտորեն համագործակցել ԻԿԿ անդամ բոլոր պետությունների հետ: Վերջին շրջանում Ադրբեջանը զգալի քայլեր է անում՝ բարելավելու հարաբերությունները արաբական իսլամական աշխարհի հետ: Արաբական աշխարհում, որտեղ ավանդականորեն ամուր եմ Հայաստանի դիրքերը, Ադրբեջանը շատ «բացեր» ունի: Այս տեսանկյունից ուշագրավ է 2006թ. օգոստոսի վերջին Հորդանանի Աբդալլահ թագավորի առաջին պաշտոնական այցը Բաքու, որի ընթացքում ստորագրվեց միջկառավարական պայմանագիր:

Պետք է նկատել, որ Ադրբեջանի հեղինակությունն իսլամական աշխարհում որոշակիորեն աճել է: Իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին առաջին հերթին արտահայտվում է ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղին առնչվող բանաձեւերը հօգուտ Ադրբեջանի քվեարկելու հանգամանքով: ՄԱԿ-ում իսլամական պետությունների նման կեցվածքն առաջիկայում հազիվ թե փոփոխման ենթարկվի: Իր հերթին՝ Ադրբեջանը ԻԿԿ շրջանակներում ձգտում է հասնել Հայաստանի դեմ քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցների կիրառմանը:

Միեւնույն ժամանակ, Լեռնային Ղարաբաղի եւ «ադրբեջանական գրավյալ տարածքների» հարցն իսլամական աշխարհում չունի լայն հնչեղություն: Իսկ Բաքվի հանդիպումները, ըստ էության, որել է նոր բան չավելացրին Հայաստանի նկատմամբ որդեգրված դիրքորոշումներում, այլ վերահաստատեցին գոյություն ունեցող իրողությունները:

Վերջին շրջանում, հիմնականում կապված Միջին Արեւելքում ընթացող գործընթացների հետ, միջազգային հարաբերություններում աճել է իսլամական գործոնի նշանակությունը: Չի բացառվում նաեւ, որ առաջիկայում, տարածաշրջանում ընդլայնվող արեւմտյան ազդեցությանը հակազդելու միտումով, Ռուսաստանը եւս իր արտաքին քաղաքականության մեջ նորովի արժեւորի իսլամական ուղղությունը: Այս իրողությունները կարող են մեծացնել իսլամական գործոնի դերը նաեւ Ղարաբաղյան հակամարտության մեջ՝ շահեկան հնարավորություններ ստեղծելով Ադրբեջանի համար:

**ՎՐԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ  
Սեւակ Սարուխանյան**

Ենթադրվում է, որ 2006թ. վերջին կավարտվի Բաքու–Երզրում գազատարի կառուցումը, որը հնարավորություն կտա ադրբեջանական գազը Շահ-Դենիզ հանքավայրից հասցնել Թուրքիա: Գազատարի տարածաշրջանային նշանակությունը հիմնականում պայմանավորված է նրանով, թե որքանով նորակառույց խողովակաշարը կբավարարի Վրաստանի էներգետիկ պահանջները: Անգամ որոշ վերապահումներով կարելի է նշել, որ գազատարի հիմնական նշանակությունը կարող է դառնալ հենց Վրաստանի էներգետիկ անվտանգության ապահովումը, քանզի վերջին շրջանում Թուրքիան կասկածներ է հայտնում այն մասին, որ ինքը պատրաստ է դառնալ ադրբեջանական գազի հիմնական գնորդը:

Վրաստանին ադրբեջանական գազի հաշվին գազով ապահովելու հարցի կարելությունը տարածաշրջանում պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

1. Այլընտրանքային գազի ստացումը Վրաստանին հնարավորություն կտա նվազեցնել էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից, ինչը սկզբունքորեն կարող է ազդել Վրաստանի տարածաշրջանային, ինչպես նաեւ «արխազական» եւ «օսական» քաղաքականության վրա:

2. Ադրբեջանից այլընտրանքային գազի ստացումն էլ ավելի կամրապնդի Ադրբեջան–Վրաստան–Թուրքիա առանցքը:

3. Եվ, վերջապես, Ադրբեջանից բավարար չափով գազի ստացումը որոշակիորեն կսահմանափակի Իրանից գազ ստանալու հնարավորության Վրաստանի ջանքերը:

Այս բոլոր հնարավոր հետեւանքների հեռանկարները դիտարկելու համար անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ Վրաստանի՝ Ադրբեջան–Թուրքիա գազատարում գտնվելու տեխնիկական եւ իրավական խնդիրներին.

❖ Բաքու–Երզրում գազատարը հնարավորություն է ունենալու Ադրբեջանից Թուրքիա արտահանել 20 մլրդ մ<sup>3</sup> գազ: Ըստ ծեռք բերված պայմանավորվածությունների, Վրաստանը տարանցման համար գումար գանձելու փոխարեն ստանալու է անվճար արտահանվող գազի 5%-ը:

Սա, մոտավորապես, կկազմի տարեկան 500 մլն մ<sup>3</sup>: Սա այն դեպքում, եթե գազատարն աշխատի ողջ հզորությամբ, ինչը կասկածելի է առնվազն մինչև 2008/2009թթ.: 2005-ին Վրաստանի գազի պահանջարկը կազմել է 1,3 մլրդ մ<sup>3</sup>: 2008-ին այս ցուցանիշը կարող է հասնել 3 մլրդ-ի: Ըստ Վրաստանում արվող լավատեսական կանխատեսումների, 2015-ին տնտեսական զարգացման հաջող ընթացքը գազի տարեկան պահանջարկը կարող է հասցնել 5 մլրդ մ<sup>3</sup>-ի: Այս ցուցանիշին կարելի է հասնել միայն ենթադրելով, թե Վրաստանում կվերականգնվի ընդհանուր եւ ջեռուցման ու բնակչության գազամատակարարման համակարգը, ինչի համար համապատասխան ֆինանսական միջոցների հայթայթման հեռանկարները բավական անորոշ են:

❖ Վրաստանի էներգետիկայի նախարարի լավատեսական հայտարարություններն այն մասին, թե Ադրբեջանը պատրաստակամություն է հայտնել Վրաստանին լրացուցիչ գազ վաճառել ցածր գնով՝ \$56-64 հազար մ<sup>3</sup>-ի համար, առայժմ չի արձանագրվել վրացադրբեջանական միջպետական որեւէ պայմանագրում: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ը շահագրգռված է լինելու նվազեցնել Վրաստանի կախվածությունը ռուսական գազից: Եվ այս տեսակետից հարկ է սպասել, որ Վաշինգտոնն, իր կողմից, կփորձի «համոզել» Բաքվին ընդառաջել էժան գազ գնելու Վրաստանի խնդրանքին: Սակայն Վաշինգտոնի այս մոտեցումը խարխլում է Հարավային Կովկասում ամերիկյան էներգետիկ քաղաքականության հիմնաքարերից կարելուորագույնը. գազամուղները եւ նավթատարները կոչված են խաղալու ոչ այնքան նեղ տարածաշրջանային, որքան միջազգային նշանակալի դեր: Ադրբեջանի հեռանկարային գազի մի մեծ մասի «նստեցումը» Վրաստանում չի համապատասխանում ԱՄՆ տարածաշրջանային մեծ մարտավարության էներգետիկ քաղաքականության մեկին. նվազեցնել Թուրքիայի՝ Ռուսաստանից եւ Իրանից գազ ստանալու շահագրգռվածությունը: Այս տեսանկյունից Վրաստանի էներգետիկ անվտանգության ապահովումը եւ այս երկրում Ռուսաստանի դերի նվազեցումը կարծես թե խրախուսելու են «երկրորդ երկնագույն հոսք» ռուս-թուրքական գազատարի կառուցումը, ինչպես նաեւ ազդելու են Իրան-Թուրքիա էներգետիկ երկխոսության վրա:

Ինչ վերաբերում է Վրաստանի սպասումներին, նշենք, որ վերջին իրադարձությունները Վրաստան-Իրան կապերի զարգացման ուղղությամբ վկայում են, որ բուն վրացական ղեկավարությունը սկսել է կասկածով վերաբերվել Վրաստանի էներգետիկ անվտանգության ապահովման գործում Բաքու-Էրզրում գազատարի ունենալիք հնարավոր վճռորոշ դերին:

Ակնհայտ է, որ եթե անգամ Վրաստանը հրաժարվի ռուսական գազից, ապա դա երբեք չի բերի Ռուսաստանից նրա էներգետիկ կախվածության վերացմանը: Սա բացատրվում է նրանով, որը գազային կախվածությունն ընդհանուր էներգետիկ կախվածության ընդամենը մեկ, թեկուզ եւ կարելուր, մասն է: Վրաստանի ՁԷԿ-երի թույլ հզորությունը դեռ երկար ժամանակ այդ երկրին թույլ չի տա հրաժարվել ռուսաստանյան էլեկտրաէներգիայի ներկրումից, որն ապահովում է Վրաստանի էլեկտրաէներգիայի կարիքների մոտավորապես 21%-ը\*: Էներգետիկայի ոլորտում փոխըմբռնման վերաբերյալ հայ-վրաց-իրանական հռչակագիրը հավանաբար Վրաստանի՝ Ռուսաստանից էներգետիկ կախվածության վերացման փորձերից է, որի հաջողությունը կասկածելի է: Հնարավոր անհաջողության պատճառներ կարող են համարվել.

1. Վրաստանը գտնվում է Իրան–Ռուսաստան եւ Հայաստան–Ռուսաստան միջպետական համագործակցության եւ Իրան–ԱՄՆ հակամարտության առանցքի վրա: Ամերիկյան ռազմակայանների տեղակայումը Վրաստանում կարող է Վրաստանը դարձնել իրանա-ամերիկյան հնարավոր բախման անուղղակի մասնակից: Այս տեսանկյունից՝ Վրաստանը, իր սահմանափակ էներգետիկ շուկայով եւ քաղաքական անկայունությամբ, կարող է Ռուսաստան–Իրան հնարավոր էներգետիկ պայմանավորվածությունների կամ Իրան–ԱՄՆ հարաբերությունների էլ ավելի լարման զոհ դառնալ:

2. Ռուսաստանի ներկայությունը Հայաստանի էներգետիկ ոլորտում, որն էլ ավելի կմեծանա Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ բլոկի կառուցումից հետո, անուղղակիորեն հայ-վրացական էներգետիկ համագործակցության մասնակից կդարձնի նաեւ ռուսական ընկերություններին, որոնք բավական հաջող գնային քաղաքականության շնորհիվ կարող են որոշակիորեն պահպանել ռուսական ազդեցությունը Վրաստանում: Այս ազդեցության պահպանման համար մեծ նշանակություն կունենա նաեւ Հայռուսգազարդի կողմից Իրան–Հայաստան գազատարի գնումը:

\* Վերջին շրջանում վրացի քաղաքական գործիչներն ու լրագրողները սկսել են խոսել (ոչ այնքան հստակ) ամերիկյան առաջարկության մասին՝ Վրաստանում կառուցել ատոմային էլեկտրակայան: Նման առաջարկություններ կարծես թե արվել են նաեւ Հայաստանին: Այս զուգադիպումը կարող է վկայել այն մասին, որ կամ ամերիկյան կողմը ցանկանում է Վրաստանը եւ Հայաստանը «դուրս բերել» ռուսաստանյան էներգետիկ կախվածությունից, կամ էլ «միջուկային» հիմնահարցն օգտագործում է տեղեկատվական դաշտում ամերիկամետ մոտեցումների խրախուսման նպատակով:

3. Ռուսաստանյան գազի մատակարարումից Վրաստանի հրաժարումը եւ ռուս-վրացական հարաբերությունների հետագա լարվածությունը կարող են հանգեցնել նրան, որ Վրաստանը կասեցնի ռուսական գազի մատակարարումը Հայաստանին, ինչը կարող է հետեւանք լինել Ադրբեջանի, Թուրքիայի եւ անգամ ԱՄՆ մոտեցումների: Սակայն այս դեպքում արդեն իսկ Վրաստանի համար հիմնախնդրային կդառնան Հայաստանից էլեկտրաէներգիայի գնումը եւ իրանական գազի ստացումը. այն եւ դրանից ստացված էլեկտրաէներգիան արդեն ամբողջությամբ կարող են օգտագործվել զուտ հայկական էներգետիկ պահանջների բավարարման համար:

4. Եթե անգամ հաջողվի Հայաստանի տարածքով իրանական էլեկտրաէներգիա ստանալ, ապա կասկածելի է, որ այն ամբողջովին կարող է ուղղվել դեպի Վրաստանի այն տարածքները, որոնք առավել չափով են կախված ռուսական էլեկտրաէներգիայի մատակարարումներից: Խոսքը էթնիկական եւ մշակութային առանձնահատկություններ ունեցող Սվանեթիայի եւ Սենգրելիայի մասին է. այստեղ տնտեսական եւ էներգետիկ անկայունությունը դժգոհությունների մեծ ալիք կարող է հարուցել: Սվանեթիայում Թբիլիսիի դիրքերի ամրապնդումը տեղի «իշխանների» դիրքերի հաշվին արդեն իսկ մեծ դժգոհություններ է հարուցում եթե ոչ հասարակ բնակչության, ապա զոնե էթնիկական վերնախավի շրջանում:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Բաքու–Երզրում գազատարը եւ հայ-վրաց-իրանական պայմանավորվածությունները չեն կարող լուծել Վրաստանի՝ Ռուսաստանի էներգակիրներից կախվածության վերացման հարցը: Սա կարող է Վրաստանի համար բավական վտանգավոր հետեւանքներ ունենալ: Միեւնույն ժամանակ, չնայած այն բանին, որ Հայաստանը կարող է տուժել ռուս-վրացական հակամարտությունից, նրա համար լավ հնարավորություն է բացվում Իրանի հետ երկրորդ գազատարի կառուցման վերաբերյալ բանակցությունները հաջող ավարտելու: Նոր գազատարը, անկասկած, հետագայում կարող է օգտագործվել Վրաստանի հետ հարաբերություններում, մանավանդ հաշվի առնելով, որ ռուս-վրացական հարաբերություններում առկա հիմնախնդիրները եւ Բաքու–Երզրում գազատարը չեն լուծում Վրաստանի էներգետիկ անվտանգության հարցը:

**ՌՈՒՍԱՍՏԱՆ – ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐ.  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ  
Գագիկ Տեր-Հարությունյան**

ԱՄՆ–Ռուսաստան հարաբերությունները թեևակոխել են որակապես նոր փուլ: Դրա առանձնահատկություններից է այն, որ եթե նախկինում Ռուսաստանն առկա հակասությունները փորձում էր ներկայացնել որպես մարտավարական, ժամանակավոր բնույթի անհարթություններ, ապա ներկայումս դիվանագիտական պայմանականություններն անտեսվում են. ԱՄՆ-ը ընդունվում է որպես աշխարհառազմավարական հակառակորդ՝ այդտեղից բխող գաղափարախոսական-քարոզչական առճակատումով: Դրա վկայությունն է ռուս-վրացական հարաբերությունների վերջին սրացումը, որի ընթացքում տեղեկատվական դաշտում շեշտը դրվում էր ոչ այնքան Վրաստանի գործողությունների, որքան նրա «թիկունքին կանգնած» ԱՄՆ քաղաքականության վրա: Այդ համատեքստում հատկանշական է Պուտին–Բուշ հեռախոսազրույցի մասին Կրեմլի մամլո հաղորդագրության տոնը. *«Վրաստանի վերաբերյալ ռուսաստանյան կողմը շեշտել է, որ երրորդ երկրների ցանկացած գործողություններ, որոնք կարող են մեկնաբանվել վրացական դեկավարության կողմից որպես իրենց ապակառուցողական քաղաքականության քաջալերում, անընդունելի են եւ վտանգ են ներկայացնում տարածաշրջանի խաղաղության ու կայունության համար»:* Ուշադրության արժանի է նաեւ այն, որ թեւ, համաձայն լրահոսի՝ ռուս սպաների ազատումը պայմանավորված էր ամերիկյան միջնորդությամբ, սակայն դա չի մեղմել Վրաստանի հանդեպ Մոսկվայի ընդունած պատժամիջոցները:

Հարաբերությունների նման սրացումը սպասելի էր. այն բխում է երկու տերությունների միջեւ քաղաքական, տնտեսական եւ գաղափարական ոլորտներում ընթացող հակամարտության տրամաբանությունից: Միեւնույն ժամանակ, ներկա իրավիճակը ձեւավորվել է փուլ առ փուլ. ԱՄՆ–ՌԴ հարաբերություններն ունեցել են էական փոխակերպումներ, եւ դրանք պայմանականորեն կարելի է դասակարգել հետեւյալ տեսքով:

**1991-1999թթ.՝ կաթվածահարության փուլ**

Այս ժամանակահատվածում Ռուսաստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես պատերազմում հաղթած տերության գործողություններ պարտվածի հանդեպ: Արդյունքում Ռուսաստանի ազդեցությունից դուրս եկան Արևելյան Եվրոպայի երկրները եւ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների զգալի մասը: Վիճահարույց էր բուն Ռուսաստանի ամբողջականությունը: Դա վերաբերում էր ոչ միայն Յուլիսային Կովկասին, որը գործնականում դուրս էր եկել վերահսկողությունից. լրջորեն քննարկվում էին ՌԴ-ն մի քանի (որոշ նախագծերում՝ մինչեւ ութ) ինքնիշխան հանրապետությունների մասնատելու սցենարները:

Պատմական այս փուլի առանձնահատկությունն այն էր, որ ԱՄՆ գործողությունները գաղափարական, քաղաքական եւ տնտեսական ոլորտներում կաթվածահար Ռուսաստանի կողմից որեւէ լուրջ հակազդեցության չէին հանդիպում: Հարավսլավական իրադարձությունների ընթացքում արտագործնախարար Ե.Պրիմակովի «ինքնաթիռային դիվանագիտությունը» կամ ռուս դեսանտայինների «կոսովյան երթը» զգացմունքային բնույթ էին կրում ու որեւէ շոշափելի հետեւանք չէին կարող ունենալ: Հարաբերական հաջողությունները վրաց-աբխազական եւ վրաց-օսական հակամարտությունների գոտում բրիտանական ռազմական փորձագետներն արդարացիորեն վերագրում են ավելի շուտ «ինքնուրույն գործող ռուս զեներալներին», քան պաշտոնական Մոսկվայի նպատակաուղղված քայլերին:

**2000-2005թթ.՝ «պասիվ» դիմադրության կամ «թաքնված» սառը պատերազմի փուլ**

Դեռեւս 1999թ. Վ.Պուտինը (այն ժամանակ վարչապետ) Ռուսաստանի ներքին իրադրության վերաբերյալ իրեն ուղղված հարցին պատասխանել էր, թե «ամենուր Չեչնիա է»: Միեւնույն ժամանակ, Չեչնիայում ընթացող ռազմական գործողություններին ԱՄՆ-ը բացասաբար արձագանքեց՝ դրանք ընկալելով որպես անմիջական մարտահրավեր: 2001թ. սեպտեմբերի 11-ին, կարծես թե, հաջորդեց ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների ջերմացում՝ «հակաահաբեկչական կռաւիցիայի» ձեւաչափում: Սակայն միջինասիական հանրապետություններում ամերիկյան «ժամանակավոր» ռազմակայանների



տեղակայումը եւ դրանց դուրսբերման վերաբերյալ նախնական պայմանավորվածությունների խախտումը, ամերիկյան զինվորական ստորաբաժանման ժամանումը Վրաստան, ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության «ընդլայնման» գործընթացները ցրեցին Կրեմլի ղեկավարության պատրանքները ԱՄՆ – ՌԴ ռազմավարական գործընկերության հնարավորության վերաբերյալ: Իր հերթին՝ Վաշինգտոնը, կանխատեսելով Ռուսաստանի հնարավոր վերականգնումը, փորձում էր առավել արագ իրագործել իր ծրագրերը: Հենց այս ժամանակահատվածում էր, որ ԱՄՆ-ը, վերականգնելով սառը պատերազմի տրամաբանությունը, զուգակցելով «հակահարձակական կանխարգելիչ պատերազմի»՝ ռազմական եւ ամենուր «ուճիվերսալ դեմոկրատական համակարգ հաստատելու» գաղափարախոսական ռազմավարությունները, կարողացավ հասնել տպավորիչ հաջողությունների: Դրանցից, մասնավորապես, նշենք հետեւյալները.

- ❖ Բեկանվեց Մերձդնեստրյան հակամարտության կարգավորման՝ նախապես բոլոր կողմերի համար ընդունելի (ենթադրվում էր Մոլդովայի Հանրապետության ֆեդերալացում, որի կազմում կլիներ նաեւ Մերձդնեստրը), այսպես կոչված, «Կոզակի ծրագիրը». այդպիսով Մոլդովան փաստորեն դուրս բերվեց Ռուսաստանի ազդեցության գոտուց:

- ❖ Վրաստանում եւ Ուկրաինայում «գունավոր» հեղաշրջումների արդյունքում ձեւավորվեցին հստակ արեւմտամետ եւ հակառուսաստանյան ուղղվածություն ունեցող վարչախմբեր:

- ❖ Մերձբալթիկան եւ Արեւելյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներն ընդունվեցին (կամ հաստատվեցին նրանց ընդունվելու ժամկետները) ՆԱՏՕ. այդ երկրների իշխանությունները զրավեցին ամերիկամետ, որպես կանոն՝ մասամբ հակաեվրոպակենտրոն եւ հստակ հակառուսական դիրքորոշում, հատկապես բալթյան հանրապետությունները եւ Լեհաստանը:

- ❖ ԱՄՆ-ը, իրեն ձեռնտու տարբերակով, միակողմանիորեն դուրս եկավ Հակահրթիռային պաշտպանության պայմանագրից. այդպիսով փաստորեն խախտվեց երկու երկրների միջեւ ձեւավորված հրթիռամիջուկային հավասարակշռությունը:

Ի տարբերություն նախկինի, այս փուլում Պուտինի վարչակազմը փորձում էր իր ունեցած հնարավորությունների չափով հակազդել ԱՄՆ եւ նրա եվրոպական դաշնակիցների գործողություններին: Ըստ էության,

Մոսկվայի քայլերը նույնպես ենթարկվում էին սառը պատերազմի տրամաբանությանը, սակայն կրում էին «թաքնված» (լատենտային) բնույթ. դեռևս թույլ Ռուսաստանը չունեի անհրաժեշտ ռեսուրսներ արդյունավետ դիմակայության համար:

Միեւնույն ժամանակ, հենց այդ փուլում Ռուսաստանին հաջողվեց վերականգնել երկրի կառավարելիությունը, զարգացնել տնտեսությունը (առանցքային նշանակություն ունեցավ էներգետիկ ռեսուրսների վրա պետական վերահսկողության սահմանում), բարելավել զինված ուժերի վիճակը: Արտաքին ոլորտում Ռուսաստանը կարողացավ այս կամ այն չափով արդյունավետ քաղաքականության վարել արեւմտաեվրոպական (Մոսկվա–Բեռլին–Փարիզ), արեւելյան (Մոսկվա–Պեկին) եւ հարավային (Մոսկվա–Թեհրան) աշխարհաքաղաքական ուղղություններով, որոշակիորեն վերականգնվեց այդ երկրի հեղինակությունը ԱՊՀ հանրապետություններում:

### **2005թ.-ից սկսած՝ «դասական» սառը պատերազմի փուլ**

Այս փուլի գլխավոր հատկանիշը ԱՄՆ բացարձակ գերակայության ավարտն է եւ գլոբալ քաղաքական հարթությունում նրան համակարգված կերպով հակազդող դերակատարների, ներառյալ Ռուսաստանի, ի հայտ գալը: Այս նոր փուլի սկիզբ կարելի է ընդունել 2005թ. հուլիսի 1-ը, երբ Չինաստանը եւ Ռուսաստանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որի դրույթներն ուղղակիորեն դեմ էին Միացյալ Նահանգների գաղափարախոսական-ռազմավարական դոկտրիններին:

Հռչակագրի ի հայտ գալը վկայությունն է այն իրողության, որ այդ երկու տերություններն արդեն իսկ տիրապետում էին անհրաժեշտ ռազմաքաղաքական, տնտեսական եւ կազմակերպչական ներուժի, որպեսզի հանդես գան ԱՄՆ գերակայության դեմ: Չեռք բերած հնարավորությունների արտահայտություններն էին նույն 2005-ին Ուզբեկստանում «գունավոր», ծայրահեղական իսլամի երանգ ունեցող հեղաշրջման ամերիկյան սցենարի տապալումը եւ դրան հաջորդած՝ ԱՄՆ օդային ռազմակայանի դուրսբերումն այդ երկրից: Այդպիսով սկիզբ դրվեց Կենտրոնական Ասիայից Միացյալ Նահանգների «դուրսնղման» գործընթացին: Ռուսաստանին հաջողվեց մասնակիորեն «կտրել» իր համար անբարենպաստ իրավիճակը նաեւ Ուկրաինայում, որտեղ 2006թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձեւավորվեց մոսկովյան կողմնորոշում ունեցող կառավարություն:

Ռուսաստան–ԱՄՆ հարաբերությունների համար առանցքային նշանակություն ունեցան Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումները: Այդ խնդրում Մոսկվայի ընդունած ճկուն, բայց հայտնի սկզբունքային դիրքորոշումը համահունչ էր Պեկինի, իսկ որոշ կետերում՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի մոտեցումներին. այն փաստորեն ընդունվեց միջազգային հանրության կողմից եւ ստիպեց ԱՄՆ-ին կարճաժամկետ հեռանկարում զիջել իր դիրքերը (այս խնդրում կարելու էր ակտիվորեն մտադրվել նաեւ մերձավորարեւելյան վերջին պատերազմը, որի արդյունքները բարենպաստ էին Ռուսաստանի համար):

Վերոնշյալ գործընթացները տեղի են ունենում Ռուսաստանում նոր գաղափարախոսության ձեւավորմանը զուգընթաց, որը ենթադրում է համապատասխան քարոզչական գործունեության ծավալում: Ռուսաստանյան ՁԼՄ մի հատվածն՝ անհամեմատ ավելի բարձր պրոֆեսիոնալ մակարդակով, քան դա կատարվում էր խորհրդային տարիներին, փորձում է ձեւավորել ԱՄՆ ոչ շահեկան կերպարը, ինչը նպաստում է հակամամերիկյան տրամադրությունների առաջացմանը: «Ամերիկյան վտանգի» վերաբերյալ տեսակետը դարձել է քաղաքական կուրսի բաղադրիչ, եւ դրա վկայությունն է վերջերս Պետական դումայում ներկայացված Վալենտին Ֆալինի եւ Գենադի Եվստաֆեւի զեկույցը՝ նվիրված ռուս-ամերիկյան հարաբերություններին: Համաձայն այդ վերլուծության (որը յուրովի պատասխան է այս գարնանը ԱՄՆ-ում «Միջազգային հարաբերությունների խորհրդի» կողմից պատրաստված «Ռուսաստանի սխալ ճանապարհը» փաստաթղթի)՝ ԱՄՆ հիմնական նպատակը Ռուսաստանի քաղաքական կուրսը փոխելն է. այլ խոսքով՝ ամրագրվում է, որ ԱՄՆ-ը Ռուսաստանն ընկալում է որպես հակառակորդ՝ այստեղից բխող բոլոր հետեւություններով: Այս համատեքստում տեղին է հիշել ամերիկյան Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար Ռիչարդ Լուգարի հայտարարությունը, թե Ռուսաստանը, Իրանի եւ Վենեսուելայի հետ միասին, ԱՄՆ-ին թշնամի երկիր է հանդիսանում: Նկատենք, որ դա սոսկ քարոզչական հայտարարությունն է. օրերս ամերիկյան ՁԼՄ-ում հայտնվեց հաղորդագրություն այն մասին, թե Պենտագոնը ս.թ. դեկտեմբերին պլանավորում է անցկացնել շտաբային զինավարժություն, որի ընթացքում մշակվելու են ԱՄՆ–ՌԴ լոկալ միջուկային պատերազմի սցենարները՝ Իրանի կողմից ռազմական միջուկային ծրագրի իրագործման համատեքստում:

Ակնհայտ է, որ ԱՄՆ–ՌԴ հակասությունները չեն սահմանափակվում վերոնշյալ հանգամանքներով: Անողորմ պայքար է գնում էներգակիրների

շուկայում, որտեղ ամերիկյան (Բաքու–Ջեյհան նավթամուղ, Բաքու–Էրզրում գազամուղ) եւ ռուսաստանյան (Բուրգաս–Ալեքսանդրապոլիս նավթամուղ, Յյուսիսեվրոպական գազամուղ) նախագծերն աշխարհատնտեսական առումով հակամարտող բնույթ են կրում: Գրեթե նման իրավիճակ է տիրում նաեւ այլ ոլորտներում: Հակասությունների այս համախումբը եւ դրանց շուրջ ծավալված գաղափարախոսական եւ տնտեսական առճակատումը ենթարկվում են (չնայած հայտնի տարբերություններին) գրեթե նույն օրինաչափություններին, ինչ նախորդ դարի սառը պատերազմը:

Հաշվի առնելով հակամարտությունը Վրաստանում եւ տեւական բնույթ ձեռք բերած լարվածությունը Մերձավոր եւ Միջին Արեւելքում՝ պետք է փաստել, որ ԱՄՆ–ՌԴ առճակատումների «գծերն» անցնում են ՀՀ հարեւանությամբ: Նման իրողությունն ինքնին դեռեւս բացասական չէ Հայաստանի համար, սակայն ենթադրում է այդ իրավիճակին համարժեք մոտեցումների եւ գործողությունների մշակում:

## **ԵՎՐՈՊԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՄԻՋԵՎ Սուրեն Սարյան**

Վերջերս Գերմանիայում հայրապետական այցելությամբ գտնվող Չռոմի պապ Բենեդիկտոս XVI-ը, դասախոսությամբ ելույթ ունենալով Ռեգենսբուրգյան համալսարանում, մեջբերում արեց XIV դարի բյուզանդական կայսր Մանուել II Պալեոլոգոսից, որը, բանավիճելով ոմն պարսիկ աստվածաբանի հետ, ասել էր հետեւյալը. «Յո՛ւյց տուր ինձ, ինչ բերեց Սուհամեդը, եւ կգտնեք միայն չարն ու անմարդկայինը, որպիսինն է նրա պատգամը՝ տարածել իր քարոզած հավատը սրի ուժով...»:

Ինչպես եւ սպասվում էր, պապի ելույթին հաջորդեցին մահմեդական երկրներում քրիստոնեական եկեղեցիների պայթեցումներ, Վատիկանը եւ Չռոմը ոչնչացնելու սպառնալիքներ, կաթոլիկ վանաքրոջ սպանությունը Սոմալիում:

Փաստորեն, մահմեդական աշխարհում պապի ելույթն ընդունվեց որպես նոր խաչակրաց արշավանքի հայտարարում եւ Արեւմուտքի կողմից մահմեդականների նկատմամբ հերթական անհարգալից վերաբերմունքի դրսեւորում, ինչպես դա պատահեց այս տարվա ձմռանը տեղի ունեցած «ծաղրանկարային պատերազմի» դեպքում:

Այդուհանդերձ, Չռոմի պապը պաշտոնական ներողություն չխնդրեց՝ հայտարարելով միայն, որ նրան ճիշտ չեն հասկացել, եւ ինքն ափսոսում է, որ իր ուղերձն առաջացրել է նման արծազանք: Քրիստոնեական աշխարհի համար իրադարձություն էր այն, ինչ ասաց Բենեդիկտոսը եւ այն, որ նա հրաժարվեց ուղղակի ներողություն խնդրել իր խոսքերի համար, այսինքն՝ ճանաչել Սուհամեդին որպես ճշմարիտ աստվածային հավատի մարգարե:

Չանելով բռնության կրոնական արմատների քննարկման վրա դրված արգելքը՝ Բենեդիկտոս XVI-ը փաստորեն զգուշացրեց, որ իսլամն՝ իր մոլեռանդ տեսքով, բացահայտ սպառնալիք է ներկայացնում Արեւմուտքի համար, եւ այսօրվա իսլամի հետ չկա երկխոսության ընդհանուր հող:

Ըստ էության, պապը իսլամի հետ իր հարաբերություններում պահանջեց փոխադարձության սկզբունքի պահպանում. եթե իսլամն ուզում է, որպեսզի Արեւմուտքը չխառնվի իր գործերին, ապա նույն կերպով իսլամը չպետք է միջամտի Արեւմուտքի գործերին: Օրինակ,

հնարավոր է, արդյոք, պատկերացնել, որ Եվրոպայի քաղաքներում անցկացվեն բողոքի ցույցեր, ասենք, Իրանի հոգեւոր գերագույն առաջնորդի կամ Եգիպտոսի «մուսուլման եղբայրների» ղեկավարի քարոզի առիթով. իսկ այդ քարոզներում արեւմտյան քաղաքակրթության հասցեին հաճախ են ամենածայրահեղ բնորոշումներ հնչում:

Հայտնի է նաեւ, որ մինչեւ իր պապ ընտրվելը կարդինալ Ռատցինգերն ընդդիմանում էր նաեւ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը՝ այլ մշակութային տարածությանը պատկանելու պատճառով: Միաժամանակ այս տարվա նոյեմբերին նա ծրագրում է այցելել Թուրքիա: Այցը կարող է խորհրդանշական լինել: 1054թ. Տիեզերական եկեղեցու պառակտումից ի վեր ոչ մի պապ չի եղել Երկրորդ Հռոմում՝ Կոստանդնուպոլսում: Այս առումով, Հռոմի պապի խոսքերը նաեւ յուրատեսակ ուղերձ էին թուրքերին, որն ուներ մոտավորապես հետեւյալ իմաստը. եթե դուք ցանկանում եք ունենալ ձեր տեղը Եվրոպայում, եթե ուզում եք մտնել Եվրոպական ընտանիք, ապա պետք է վարվեք բյուզանդական կայսրի բնորոշմանը հակառակ:

Եվ ամենեւին պատահական չէր, որ հենց Թուրքիան, որը մահմեդական երկրներից առավել արեւմտականացվածն ու աշխարհիկն է, դարձավ պապի դեմ ամենակատաղի ելույթների օջախներից մեկը: Մասնավորապես, Թուրքիայի կառավարող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը համեմատեց Բենեդիկտոս XVI-ին Հիտլերի եւ Սոււուլինիի հետ:

Հասկանալի է նաեւ, որ Հռոմի պապը, առավել եւս այնպիսի փորձառու աստվածաբանը եւ գիտնականը, ինչպիսին Յոզեֆ Ռատցինգերն է, պատահական հայտարարություններ անել կամ առավել եւս՝ սխալմամբ ինչ-որ բան ասել չէր կարող: Քայլը լիովին գիտակցված էր:

Ավելին, Ռեգենսբուրգյան դասախոսությունը նվիրված էր ոչ այնքան իսլամի հետ քրիստոնեության հարաբերություններին, որքան բուն քրիստոնյա աշխարհի ճգնաժամին: Բուն իսլամին վերաբերող բառերի քանակն այդ դասախոսության մեջ կազմում է ամբողջ տեքստի ընդամենը 10 %-ը: Այնպես որ, դա ամենեւին էլ իսլամի մասին ճառ չէր:

Իսկ եթե պապը մեջբերում չաներ բյուզանդական կայսրից, ապա այսօր աշխարհը եւ մենք չէինք քննարկի նրա ուղերձը: Գուցեւ Վատիկանը չէր ցանկանում բռնություններ առաջացնել, սակայն այնտեղ հաստատապես ցանկանում էին Եվրոպային բերել հստակության սահմանագծին:

Բենեդիկտոս XVI-ը դարձավ այն հոգեւոր հովիվը, որն իր վճռական խոսքով այլեւս հավակնում է լինել ամբողջ քրիստոնեական աշխարհի առաջնորդը: Դեռեւս իր ծառայության սկզբում նա խոստացավ միավորել քրիստոնյաներին, եւ այդ ճանապարհին Ռեգենսբուրգյան

դասախոսությունն առաջին քայլն էր, որով քրիստոնյա աշխարհին առաջարկվում է համախմբվել նոր վտանգներին դիմակայելու համար: Ի վերջո, այն փաստը, որ պապը մեջբերում է անում ուղղափառ հոսանքի ներկայացուցից, վկայում է քրիստոնեության նկատմամբ Բենեդիկտոս XVI-ի ունիվերսալ մոտեցման մասին: Տվյալ դեպքում Բենեդիկտոսը հանդես եկավ ոչ թե որպես կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, այլ ամբողջ քրիստոնյա աշխարհի լիդեր, որը պաշտպանում է քրիստոնեության հիմնարար արժեքները:

Ավելին, պապի դասախոսության մեծ մասն ուղղված էր քրիստոնեության այսօր առավել ազդեցիկ ուղղության՝ բողոքականության դեմ: Դրանով Բենեդիկտոս XVI-ը փորձում է սահմանազատվել ոչ միայն իսլամից, այլև արդի բողոքականության հիմքում ընկած արեւմտյան պոզիտիվիզմից ու պրագմատիզմից՝ փոխարենը ներկա քրիստոնեության հիմքում դնելով արեւելյան եկեղեցիների մոտեցումները:

Այդ միավորման համար հողն արդեն նախապատրաստված է: Կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիների համար այսօր անընդունելի են ժամանակակից արեւմտյան քաղաքակրթության զարգացման միտումները, հատկապես՝ ընտանիքի եւ մարդու սեռական վարքագծի առումներով: Վերջերս Ռուսական ուղղափառ եկեղեցու ժողովի կողմից ընդունված Մարդու իրավունքների եւ արժանապատվության մասին հռչակագիրը եւ Բենեդիկտոս XVI-ի ելույթը հենց դրա մասին են խոսում: Նախապատրաստվում է համատեղ կաթոլիկ-ուղղափառ հաշտեցման ժողովի հրավիրումը: Արդեն այս օրերին Բելգրադում ընթանում են կաթոլիկ-ուղղափառ հանձնաժողովի խորհրդատվությունները: Եվ ինչքան նոր արեւմտյան քաղաքակրթությունը հեռանա քրիստոնեական արժանատիներից, այնքան է՛լ Վատիկանի, է՛լ ուղղափառ եկեղեցու գերագույն խնդիրն է դառնալու արդեն Տիեզերական Քրիստոնեական եկեղեցու պաշտպանությունը այդ քաղաքակրթության վտանգավոր ազդեցությունից եւ նրա ականա դաշնակից դարձող իսլամի գրոհից:

Այսինքն՝ հենց քրիստոնյա աշխարհի հոգեւոր ճգնաժամն է նպաստում մահմեդական արմատականության տարածմանը եւ հզորացմանը. դա էր Հռոմի պապի ուղերձի գլխավոր իմաստը: Ներկայումս հոգեւոր սնանկություն զգացող բազմաթիվ ամերիկացիներ եւ եվրոպացիներ հավատափոխ են դառնում եւ ընդունում իսլամ: Միայն Գերմանիայում այսօր իսլամ ընդունած գերմանացիների թիվը հասնում է 60 000 մարդու, ընդ որում, այդ թիվն անցյալ երեք տարիների համեմատությամբ աճել է երկու անգամ: Ավելին, արդեն մի քանի փաստեր կան, որ նրանցից ոմանք դարձել են մահապարտ ահաբեկիչներ:

Շատ մահմեդական աստվածաբաններ որպես նոր Եվրոպայի եւ նոր

արեւմտյան հասարակության հենք տեսնում են հենց իսլամը, որը կգա փոխարինելու նյութապաշտության մեջ կորած, թուլացած եւ իր քրիստոնեական արմատները կորցրած ներկա Եվրոպային: Այսպես, «Եվրոփսլամի» գլխավոր ջատագով համարվող, ժնեւում բնակվող աստվածաբան Թարիք Ռամադանը հայտարարում է, որ *«նյութական արժեքներից կառչած արեւմտյան մարդը մոտեցրել է եվրոպական քաղաքակրթության վախճանը, եւ քրիստոնեական եկեղեցին այլեւս անզոր է: Ուստի, միայն մահմեդական օրենքների խստությունը եւ համապատասխան դաստիարակությունը կվերածնեն Եվրոպան: Քրիստոնեական եկեղեցիներն այսօր դատարկ են, իսկ մահմեդական մզկիթները լեփ-լեցուն են»:*

Իսկապես, այսօրվա Եվրոպան՝ իր ղեկավարներով եւ հասարակություններով չափազանց աշխարհիկացված է: Իսկ քրիստոնեական ավանդույթների մերժումը հանգեցնում է նաեւ քրիստոնեական դասական ընտանիքի վերացմանը: Երեխաների ծնելիության անկումը, ամուսնությունների նվազումը, միասեռականության ազդեցիկ եւ համատարած տարածումն ու քարոզչությունը բերում են նրան, որ Եվրոպայի բնիկ բնակչությունը եւ նրա քրիստոնեական նկարագիրը վերանում են: Իսկ իսլամն ու մահմեդականները լցնում են ստեղծված կրոնական եւ ժողովրդագրական դատարկությունը:

Այնպես որ, ջիհադի օջախ ամենայն հավանականությամբ կդառնան ոչ այնքան Մերձավոր ու Միջին Արեւելքի երկրները, որքան արեւմտյան մեծ քաղաքների մահմեդական գաղթականների թաղամասերը: Չէ՞ որ հենց Յամբուրգում են պատրաստվել սեպտեմբերի 11-ի մահապարտ ահաբեկիչները, Լոնդոնում եւ Մադրիդում են ապրել այդ մայրաքաղաքներում ահաբեկություններն իրագործած ծայրահեղականները:

Քաղաքակրթական բախման մասին վերջերս խոսեց նաեւ Յենրի Բիսինջերը, որն, իհարկե, Յոռմի պապ չէ, սակայն մնում է ժամանակակից քաղաքականության կարկառուն դեմքերից մեկը: Նա եւս խոսում է գալիք վտանգների մասին. *«Մենք տեսնում ենք ոչ թե առանձին ահաբեկչական գործողություններ, այլ լավ մտածված գրոհ միջազգային հարաբերությունների համակարգի դեմ... «Յիզբալլահի» եւ «Ալ-Կաիդայի» նման կազմակերպությունների ստեղծումը նշանակում է, որ ազգային պատկանելությունը սկսում է զիջել իր տեղը վերազգային կազմավորումներին պատկանելությանը: Իսկ ռազմատենչ ջիհադականության շարժիչ ուժն է վստահությունը նրանում, որ ներկայիս իրերի կարգը ինքին ապօրինի է... Իրաքյան պատերազմից հետո Ամերիկայի սխալների եւ Եվրոպայի դասալքության մասին բանավեճն այլեւս չնչին է թվում այն վտանգի դիմաց, որի հետ բախվելու է աշխարհը:*



*Այն է. քաղաքակրթությունների միջև մեծ պատերազմի առաջացում՝ Մերձավոր Արեւելքում միջուկային զենքի առկայության պայմաններում: Այլեւս մենք գիտենք մի բան. կամ մենք կառուցում ենք նոր աշխարհակարգը, կամ աշխարհում առաջանում է գլոբալ աղետի ներուժ»:*

Այդ աղետին դիմակայելու համար արեւմտյան քաղաքակրթությունը շարժվում է երկու տարբերակներով: Առաջինն այսօր փորձում են իրականացնել ամերիկացիները՝ քարոզչությամբ եւ զենքի ուժով տարածել արեւմտյան արժեքները բուն մահմեդական քաղաքակրթության ներսում, ինչը, սակայն, Իրաքի, Աֆղանստանի եւ Իրանի դեպքերից դատելով՝ այդքան էլ չի հաջողվում: Այս տարբերակի հաջողության համար անհրաժեշտ է ամբողջ մահմեդական աշխարհի ուղղակի զավթում եւ միաժամանակ՝ տեղական իշխանավորների վերացում կամ գնում, կրոնական ու դպրոցական կրթության լիակատար վերահսկողություն եւ այլն. կարճ ասած, այն, ինչ արվեց Յնդկաստանում բրիտանական գաղութատիրության հաստատումից կամ Գերմանիայում եւ Ճապոնիայում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սակայն նման՝ «սպիտակ մարդու» քաղաքակրթական բեռի սցենարի համար Արեւմուտքն այսօր բացահայտորեն պատրաստ չէ:

Մյուս տարբերակը, որը կարող է կիրառել արդեն Եվրոպան, հիշեցնում է հին Չինաստանի հայեցակարգը, երբ ամբողջ մահմեդական աշխարհի սահմանագծով կառուցվում է պատ, փակվում է ներգաղթյալների մուտքը Եվրոպա: Սակայն եվրոպական էլիտան հակված է եղել շարունակաբար գնալ գիշումների իսլամի գաղափարախոսական եւ վարքագծային գրոհի դիմաց, ինչի լավագույն դրելորումները եղան Ֆրանսիայում մահմեդական համայնքի արագ աճը եւ Իսպանիայի ձախ կառավարության ուղեգիծը՝ մահմեդական ներգաղթյալների առջեւ դռները բաց պահելու առումով:

Արդյունքում՝ գործ ունենք Եվրոպան «Եվրաբիայի» վերածվելու քաղաքականության հետ, որին միտումնավոր կամ ակամա նպաստում են եվրոպական քաղաքական մի շարք գործիչներ: Նրանց նպատակն է միավորել Եվրոպան եւ Միջերկրական ծովի ավազանի երկրները՝ Յուսիսային Աֆրիկան ու Մերձավոր Արեւելքը մեկ համայնքի մեջ: Դա թույլ կտար Եվրոպային ձեռք բերել արաբական աշխարհի մարդկային եւ վառելիքային ռեսուրսները եւ առաջ անցնել համաշխարհային գերիշխանության համար պայքարում. այսինքն՝ արդի եվրոպական էլիտան ձգտում է վերադարձնել իրեն համաշխարհային քաղաքակրթության կենտրոնի դերը, որն այսօր անցել է ԱՄՆ-ին, իսկ ապագայում հավանաբար տեղափոխվելու է դեպի Արեւելյան Ասիա: Եվ այս գործում նրա դաշնակիցն է դառնում իսլամը:

Այս տեսանկյունից էլ հասկանալի է Բենեդիկտոս XVI-ի քաղաքականությունը, որը վերակողմնորոշում է եվրոպական Արեւմուտքին իսլամական աշխարհից դեպի քրիստոնեական Արեւելք: Յենց դաշինքը ուղղափառ երկրների հետ կարող է տրամադրել այն բաղձալի ռեսուրսները, որոնք կարող են թույլ տալ եվրոպային դառնալ համաշխարհային խաղի կենտրոնական դերակատարը եւ փրկել նրան ապաքրիստոնեացումից եւ իսլամացումից:

Փաստորեն, Բենեդիկտոս XVI-ն առաջարկեց նոր ռազմավարություն, ըստ որի՝ արեւմտյան աշխարհը պետք է հակադարձի իսլամականացման վտանգին ոչ թե արտաքին, այլ ներքին միջոցներով: Այսինքն՝ նա պետք է համախմբի իր քաղաքակրթական հիմքերը, հասկանա իր արժեքների համակարգը եւ հակադրի այն մահմեդական արժեհամակարգին: Այդ ռազմավարությունը ենթադրում է քրիստոնեական աշխարհի հոգեւոր միասնականություն եւ բուն եվրոպական-քրիստոնեական արժեքների վերածնունդ, քանի որ, ըստ պապի, «որեւէ այլ տեղ մշակույթն ու պատմությունն այնքան չեն կրում քրիստոնեության դրոշմը, որքան եվրոպայում»:

Հիշատակման է արժանի նաեւ այն փաստը, որ եվրոպական էլիտայում կան շրջանակներ, որոնք գիտակցում են այդ ռազմավարության բեկումնային պահը, եւ դրանց մեծ մասը պատկանում է եվրոպական պահպանողականների հոսանքին: Բենեդիկտոս XVI-ին պաշտպանության տակ վերցրին եվրապահպանողականությունը ներկայացնող այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպես Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, Եվրահանձնաժողովի նախագահ ժոզե-Մանուել Բառոզոն, Իսպանիայի նախկին վարչապետ Խոսե-Մարիա Ասնարը, որն ուղղակիորեն պահանջեց, որպեսզի մահմեդական աշխարհը սկզբից ներողություն խնդրի Իբերիական թերակղզու 800-ամյա զավթման համար. «Ինչո՞ւ Արեւմուտքը պետք է միշտ ներողություններ խնդրի, իսկ նրանք՝ երբեք»:

Չպետք է մոռանալ նաեւ, որ Յոննի պապը ոչ միայն եկեղեցապետ է եւ աստվածաբան, այլեւ պետության առաջնորդ. պետության, որի հպատակների թիվը հասնում է մոտ մեկ միլիարդի: Այսինքն՝ նա լիովին իրավասու է մշակել աշխարհաքաղաքական ռազմավարություններ, իսկ Յոննի պապերը միշտ էլ իմացել են, թե ինչ է իրական աշխարհաքաղաքականությունը:

Եվրոպայի ապագան իրոք խաչի եւ կիսալուսնի միջեւ ընտրության մեջ է: Եվ հենց դա էր ուզում, իր խոսքերի ենթատեքստում, ասել Բենեդիկտոս XVI-ը:

## **ԱՐԺԵՅԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Դավիթ Յովհաննիսյան**

Նոր դարաշրջանի (որի սկիզբն ազդարարվեց սառը պատերազմի ավարտով) ամենակարեւոր հարցն այն է, թե երբ, ինչպես եւ, հատկապես, ում ազդեցության տակ է վերածելու հին եւ արդեն ակնհայտորեն հնացած արժեքային համակարգը, քանի որ դրանից են կախված նոր արժեհամակարգի ձեւն ու բովանդակությունը: Սակայն պակաս կարեւոր չէ, թե այդ արժեհամակարգի ձեւավորումն ինչպիսի քաղաքական գործընթացների միջոցով կհաստատվի:

Ներկայումս, այս հարցում առաջնություն ունենալու համար, ընթանում է թե՛ պայքար մի քանի մրցակցային նախագծերի միջեւ, որոնց իրական էությունն այն է, թե ինչպես են աշխարհում գոյություն ունեցող ուժերը պատկերացնում իրենց դերը եւ դիրքը ստեղծվող համաշխարհային համակարգում, այսինքն՝ խոսքը վերաբերում է այն սկզբունքային խնդրին, թե ինչպես են այդ ուժերը ադապտացվում Նոր դարաշրջանի ինֆորմացիոն-պոստինդուստրիալ քաղաքակրթությանը:

Ներկայիս միջազգային քաղաքականությանը նվիրված գրեթե բոլոր վերլուծությունները եւ հետազոտությունները հիմնվում են այն պարզունակ գաղափարի վրա, թե համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող բոլոր քիչ թե շատ կարեւոր իրադարձությունները կապված են «նավթի» հետ, այսինքն՝ այդ բոլոր գրվածքները շրջանառության մեջ են դրվում մի այնպիսի դիցաբանական համակարգում, որի կենտրոնում է «նավթ» հիմնարար արժեքը: Իրականում էներգետիկ հիմնահարցերը միայն արտահայտում են այն մրցակցությունը, որը գոյություն ունի ամերիկյան, եվրոպական, ռուսական, չինական, իրանական, արաբական եւ այլ նախագծերի միջեւ:

«Նավթային» տեսակետից, օրինակ, բավական դժվար կլինի բացատրել վերջերս ՌԴ նախագահ Վ. Պուտինի՝ Գերմանիա կատարած այցելության մի շատ կարեւոր արդյունք: Անգելա Մերկելի գլխավորած գերմանական կառավարությունը հրաժարվեց ստորագրել Ռուսաստանի հետ երկկողմանի էներգետիկ դաշինքի ստեղծման մասին փաստաթուղթը, որը վերջին տարիների ընթացքում քննարկվում եւ մշակվում էր կողմերի մասնագետների կողմից:

Ռուսաստանի առաջարկության էությունն այն է, որ ռուսական գազը

Շտոկհոլմի գազահորերից մատակարարվի ուղղակի գերմանական սպառողին՝ կազմելով մոտավորապես 55-60 մլրդ խմ: Ինչպես մեկնաբանում է ռուսական «Կոմերսանտ»-ը, նախագահ Վ.Պուտինի նպատակն էր «դիմակայել Եվրամիության՝ ներքին էներգետիկ շուկայի ազատականացման ծրագրերին»:

Բանն այն է, որ միջոցները, որոնք առաջարկվել էին ԵՄ ղեկավարության կողմից, պետք է բարդացնեն Գազարոմի մուտքը եվրոպական երկրների շուկաներ: Ռուսաստանը հույս ուներ, որ Գերմանիան, որի «Ruhrigas» եւ «RWE»<sup>1</sup> ընկերություններին նույնպես ձեռնտու չէ Եվրամիության այս քաղաքականությունը, իր էներգետիկ խնդիրների լուծման համար կզիջի Եվրամիության միասնական շահերը, ընդհանուր էներգետիկ անվտանգության սկզբունքները եւ այլն:

Սակայն, ընդգծելով ռուս-գերմանական երկկողմանի հարաբերությունների չափազանց բարձր մակարդակը եւ հայտարարելով, որ Բեռլինն իր բոլոր ջանքերը գործադրելու է երկու երկրների միջեւ համագործակցությունը եւ տնտեսական սերտ կապերն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար, Ա.Մերկելը, այնուամենայնիվ, նախընտրեց էներգետիկ դաշինք ձեւավորել Ֆրանսիայի հետ: Կողմերն արդեն իսկ հայտարարել են, որ դաշինքը ստեղծվում է Եվրամիության ներսում, սակայն դրան դեռեւս չեն մասնակցելու ԵՄ անդամ այլ երկրներ:

Այս դեպքում եւս որոշումների հիմքում ընկած պատճառները ոչ այնքան էներգետիկ բնույթ են կրում, որքան արժեքային համակարգերի մրցակցությունն են արտահայտում:

Ֆրանսիայի նախագահ Ժ.Շիրակը եւ Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելը Պուտինի Գերմանիա կատարած այցելությանը նախորդող եռակողմ հանդիպման ժամանակ պնդել են, որպեսզի Ռուսաստանը թույլ տա միջինասիական գազն իր խողովակաշարերով մուտք գործի եվրոպական ներքին շուկա, ինչը Ռուսաստանի նախագահը մերժել է՝ նկատելով, որ դա չի համապատասխանում իր երկրի շահերին:

Որո՞նք են այդ շահերն այս դեպքում: Բնականաբար, դրանք որեւէ կապ չունեն ռուսական եւ միջինասիական էներգետիկ համակարգերի մրցակցության հետ, քանի որ ռուսական գազը եվրոպական շուկայում ավելի էժան կարող է լինել առաջին հերթին այն պատճառով, որ գազի

---

<sup>1</sup> Եվրամիության այս որոշումները վտանգավոր են նաև Գազարոմի հետ համատեղ ստեղծված ռուս-գերմանական այնպիսի գազաբաշխիչ ընկերությունների համար, ինչպիսիք են «WIMGAS»-ը, «WIEH»-ը, «Verbundetzgaz»-ը:

տարանցման համար պարտադրված չէ վճարել: Հարցի պատասխանը գտնվում է այլ ոլորտում: Չգտելով վերագտնել իր տեղը համաշխարհային համակարգում եւ վերականգնել իր աշխարհաքաղաքական դերը՝ Ռուսաստանը, մի կողմից՝ սահմանափակում է միջինասիական պետությունների ինքնիշխանությունը, ձգտելով կախյալ վիճակում պահել նրանց, իսկ մյուս կողմից՝ նաեւ օգտագործելով իր՝ որպես Եվրոպային զազի հիմնական մատակարարողի լուրջ լծակները, փորձում է (իր նախագիծն ավելի հիմնավոր դարձնելու համար) ձեւավորել գերմանա-ռուսական ռազմավարական դաշինք: Ընդ որում, չի կարելի ասել, որ այս քայլերը բխում են հաստատված եւ հստակորեն իրականացվող հայեցակարգից: Ռուսաստանի այս քայլերը դեռեւս ընդամենը նոր իրավիճակում որոնումներ են հիշեցնում, քանի որ վերը նկարագրված միտումների կողքին իրականացվում են քաղաքական քայլեր, որոնք արտահայտում են Մոսկվայի մտորումները նաեւ այլ հնարավորությունների մասին:

Բոլոր դեպքերում, այն մրցակցությունը, որն ակնհայտորեն գոյություն ունի միջազգային հարաբերությունների համակարգում եւ լուրջ լարվածություն է հաղորդում ներկայիս քաղաքական իրավիճակին, կապված է նոր իրավիճակում համաշխարհային կառավարման համակարգի հստակեցված չլինելու հետ: Իսկ ժամանակակից քաղաքակրթությանը մշակույթների ադապտացման խնդիրները լուծվում են համաշխարհային կառավարման համակարգի շրջանակներում, որոնց սահմանները որոշվում են այդ համակարգի հիմքում ընկած արժեքների առավել կամ պակաս ունիվերսալությամբ:

Դեռեւս անցած դարի 40-50-ական թվականներին, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, հին արժեհամակարգի փլուզումն առաջ բերեց երկու մրցակցային նախագծեր՝ արեւմտյանը եւ խորհրդայինը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հստակ պատկերացումն այն մասին, թե ինչն է մարդկության համար ամենալավը եւ բարին, այսինքն՝ ձգտում էր բացարձակ ունիվերսալության (երկուսն էլ իրենց արմատներով իրականում արեւմտաեվրոպական էին): Առաջինի հիմքում ժողովրդավարական եւ ազատական արժեքներն էին, երկրորդի հիմքում՝ համայնավարական:

Աակայն այդ նույն ժամանակաշրջանում ստեղծվեցին նաեւ երկու այլ նախագծեր:

Առաջինը՝ Միավորված Ազգերի Կազմակերպությունն է, որն ամրագրեց պատերազմից հետո ձեւավորված քաղաքական իրավիճակը: Սակայն ՄԱԿ-ի իրական դերը շատ ավելի մեծ էր. այն պատմության մեջ

առաջին անգամ գրեթե «հավասար» իրավունքներ տվեց մեծ եւ փոքր, հարուստ եւ աղքատ, հին պետական ավանդություններ ունեցող եւ նոր անկախություն ձեռք բերած, հաղթող եւ պարտված պետություններին:

ՄԱԿ-ը, բացի պետությունների արձանագրված հավասարությունից, ուներ եւս մեկ շատ կարեւոր առանձնահատկություն. այն առաջին անգամ միավորեց երկրագունդը՝ ընդհանուր սեղանի վրա դնելով բոլոր այն հիմնահարցերը, խնդիրները, հակասությունները, հույսերը եւ սպասումները, որոնք առկա էին աշխարհի ամենատարբեր պետություններում: Այս վերջինը նշանակում էր, թե եվրոպակենտրոն մտածողությունը սկսում է նահանջել՝ ճանաչելով այն իրողությունը, որ համաշխարհային համակարգը ձեւավորվում եւ գործում է միայն այն դեպքում, եթե հաշվի է առնում բոլորի բոլորից կախվածությունը եւ փոխկապակցվածության բարձր մակարդակը:

Երկրորդը կապված է եվրոպայի միավորման սկզբնավորման հետ, երբ մի շարք պատասխանատու եւ տաղանդավոր գործիչների շնորհիվ ստեղծվեցին առաջին համաեվրոպական վերապետական կարգավիճակ ունեցող կառույցները: Այս միավորման շնորհիվ հնարավոր եղավ ներդաշնակեցնել տարբեր մշակույթների արժեքները եւ իրականացնել մեծ եւ փոքր եվրոպական երկրներն ընդհանուր համակարգին ադապտացնելու դժվարին գործը:

1947թ. Ա.Թոյնբին գրում էր. *«Ես կարծում եմ, որ ամենագլխավոր եւ դժվար քաղաքական հարցն այսօր ոչ թե այն է, թե արդյոք կմիավորվի աշխարհը քաղաքականապես, այլ այն, թե երկու այլընտրանքային ուղղություններից որով կարող է ընթանալ միավորումը: Գոյություն ունի մշտական բնույթ կրող ռազմական բախումների հնաձեւ եւ տհաճորեն ծանոթ ճանապարհը, որի դառը վերջն այն կլինի, որ պահպանված մի մեծ տերությունը «նոկաուտի» կենթարկի իր հակառակորդներից վերջինին եւ ուժի միջոցով խաղաղություն կհաստատի աշխարհում... Բացի այդ, գոյություն ունի աշխարհի կառավարման նոր կոոպերատիվ փորձ... Միանգամայն ակնհայտ է, որ այս դեպքում մենք մուտք ենք գործում քաղաքական դժվարին նախաձեռնությունների գրեթե բոլորովին անհայտ հող»:*

Արդեն ունենալով Ազգերի լիգայի գործունեության փորձը եւ ականատես լինելով ՄԱԿ-ի առաջին քայլերին՝ Ա.Թոյնբին, այնուամենայնիվ, կանխատեսում էր այն դժվարին խնդիրները, որոնք անհրաժեշտ են լինելու լուծել «աշխարհի կառավարման նոր կոոպերատիվ» ձեւն իրականացնելիս:

Միացյալ Նահանգները «նոկաուտի» ենթարկեց իր վերջին

հակառակորդին՝ Խորհրդային Միությանը, եւ ձգտում է ուժի միջոցով խաղաղություն հաստատել աշխարհում: Պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ մի գերտերություն ենթարկել է իրեն այդ ժամանակաշրջանի հայտնի «աշխարհը»: Սակայն ներկայիս պայմաններում, երբ աշխարհը միաժամանակ փոքր է, քանի որ նրա բոլոր կետերից հասանելի են բոլոր կետերը, եւ մեծ է, որովհետեւ ներկայացնում է մի այնպիսի բարդ համակարգ, որն անհնար է կառավարել մի կենտրոնից<sup>2</sup>, Միացյալ Նահանգների փորձը դատապարտված է անհաջողության, ինչի նախանշանները ներկայումս արդեն իսկ կան:

Փաստորեն, վերստին հրատապ են դառնում համաշխարհային կոոպերատիվ կառավարման նոր կաղապարի որոնումները, քանի որ արդեն լիովին հստակ է դարձել, որ ՄԱԿ-ը իր ներկայիս վիճակով, կարողանալով որոշ դեպքերում դիմակայել Միացյալ Նահանգների միանձնյա ղեկավարման հավակնություններին, անկարող է իրական կառավարում իրականացնել: Եվ քանի դեռ չի գիտակցվել, որ հիմնական խնդիրը պետք է լինի տարբեր արժեքային համակարգերի իրավահավասար եւ արդար մրցակցության ապահովումը, միջազգային ոչ մի կառույց ունակ չէ համաշխարհային արդյունավետ կառավարում իրականացնել:

---

<sup>2</sup> Հասանելիություն ապահովել՝ դեռ չի նշանակում կառավարում ապահովել: Մի կենտրոնը, որքան էլ վստահ համոզում ունենա իր արժեքների բացարձակ ունիվերսալության մեջ, որքան էլ բարդ և զարգացած ինֆորմացիոն համակարգ ունենա, չի կարող իր մեջ ունենալ բոլոր արժեհամակարգերի «գրադարանը»: Ուստի, այն արժեքային համակարգերը, որոնք ազդակներ ուղարկելով այդ հիպոթետիկ կենտրոնին՝ այնտեղից պատասխաններ չեն ստանում (քանի որ կենտրոնում բացակայում է ազդակների «ընթերցման» և ընկալման հնարավորությունը), այդպիսով դուրս են մղվում ընդհանուր համակարգից: Վերջիններս ստեղծում են իրենց ինքնուրույն կառավարման համակարգերը:

## **ԻՐԱՆԸ ԵՎ ՉՄԻԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՎԼԱՊԻՄԻՐ ՍԱԺԻՆ**

*Ս.թ. սեպտեմբերի 11-16-ը Կուբայի մայրաքաղաք Հավանայում կայացավ Չմիացած երկրների շարժման (ՉԵՇ) 14-րդ կոնֆերանսը:*

*Այսօր շարժումը միավորում է Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի 118 երկրներ, ինչպես նաեւ 15 դիտորդ երկրներ, որոնց թվում են Չինաստանը, Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուկրաինան: ՉԵՇ լիիրավ անդամ միակ եվրոպական երկիրը Բելառուսն է:*

*Հավանայի 14-րդ կոնֆերանսին մասնակցում էին ՉԵՇ անդամ 117 երկրների պատվիրակներ, այդ թվում՝ պետությունների ու կառավարությունների 56 ղեկավարներ: Բացի այդ, վեհաժողովին ներկա էին 23 միջազգային կազմակերպությունների եւ շարժմանը չանդամակցող 31 երկրների (այդ թվում նաեւ Ռուսաստանի) ներկայացուցիչներ:*

*Երեք տարով ՉԵՇ նախագահող ընտրվեց Կուբան: «15-ի խմբի» (ՉԵՇ առավել զարգացած երկրները) նախագահող դարձավ Իրանը:*

ՉԵՇ գոյության 45 տարիների ընթացքում այդ կառույցի աշխատանքներում Իրանը մեծ եռանդ չի դրսեւորել: Սակայն վերջին տարիներին Թեհրանն սկսեց այդ շարժման նկատմամբ լուրջ հետաքրքրություն ցուցաբերել: Ինչո՞ւ:

Պատասխանը կարելի է ստանալ միայն վերջին տարիներին Իրանի շուրջ քաղաքական իրավիճակի էվոլյուցիան վերլուծելով: Բայց առանց հատուկ խոր վերլուծության էլ կարելի է հաստատել, որ տվյալ գործընթացում գերակայող դեր է խաղում տարածաշրջանային եւ անգամ համաշխարհային առաջատարության հասնելու Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) ձգտումը:

Միջազգային ասպարեզում ԻԻՀ ռազմաքաղաքական վերելքի աստեղային ժամը եղավ 2001թ., երբ ԱՄՆ-ը եւ միջազգային հակաթալիբյան կոալիցիան տապալեցին թալիբների վարչակարգն Աֆղանստանում՝ այդպիսով ոչնչացնելով իսլամական Իրանի հիմնական հակառակորդներից մեկին: Այն թույլ տվեց ԻԻՀ-ին վերադարձնել Աֆղանստանում քաղաքական-տնտեսական ավանդական դիրքերը՝ հատկապես Քաբուլում ու երկրի արեւմտյան վիլայեթներում, որոնք



կորցվել էին «Թալիբան» շարժման իշխանության գալուց հետո:

Հաջորդ, ԻԻՀ-ի համար առավել կարելոր քայլն աներիկացիներն արեցին Իրաքում, 2003թ.: Նրանք ջախջախեցին Սադամ Հուսեյնին եւ նրա հակաիրանական վարչակարգը՝ վերացնելով իսլամական հանրապետության գլխավոր ավանդական թշնամուն: Թերեւս, նախորդ դարի 20-ականներին Իրաքի՝ որպես պետության, ստեղծման պահից ի վեր առաջին անգամ Թեհրանում հանգիստ շունչ քաշեցին: Չնայած Իրաքում ԱՄՆ ու նրա դաշնակիցների ներկայությամբ, այդ պետությունում իշխանությունը զգալի չափով իրականացնում են իրաքյան շիաները, որոնք հավատքով եւ հոգեբանությամբ մոտ են իրանցիներին: Ավելին, օգտագործելով այդ հոգեւոր մերժությունը, ինչպես նաեւ՝ անմիջական ազդեցությունը, Իրանի այաթոլաները խելամտորեն իրականացնում են Իրաքի ներքաղաքական գործընթացների վերահսկողություն եւ որոշակի աստիճանի կառավարում:

Իրանին աներկբայելի նվեր մատուցեց նաեւ տարածաշրջանում ԱՄՆ դաշնակից Իսրայելը, որը 2000թ. զորքերը դուրս բերեց Հարավային Լիբանանից, որտեղ Թեհրանի անմիջական մասնակցությամբ արագորեն սկսեցին աճել ու ամրապնդվել «Հիզբալլահ» իրանամետ շարժման մարտական ջոկատները: Մի քանի տարվա ընթացքում Իրանը Լիբանանում ստեղծեց տեղի ղեկավարությունից անկախ հզոր ռազմաքաղաքական կառույց՝ ընդունակ զինված եւ խորհրդարանական ճանապարհներով պաշտպանել Իրանի ռազմավարական շահերը, ընդ որում, ոչ միայն Լիբանանում, այլեւ Սիրիայում եւ պաղեստինյան տարածքներում:

2003թ.-ով սկսվում է նաեւ Իրանի «ատոմային խաղաղեցման» գործընթացը: Միջուկային հարցերում Իրանը 2003-2004թթ. դեռ համեմատաբար փափուկ էր եւ նույնիսկ գնաց որոշակի փոխզիջումների՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ Լրացուցիչ արձանագրության ստորագրում, միջուկային մշակումների վրա մորատորիումի սահմանում եւ այլն: Թեհրանի նման համեստությունն, անշուշտ, պայմանավորված էր Իրաքում ԱՄՆ գործողության առաջին՝ ռազմական փուլի հաջողությամբ եւ, իհարկե, որպես հետեւանք՝ Իրաքից հետո Իրանի վրա ամերիկյան հարվածի մտավախությամբ:

Սակայն, որքանով իրավիճակը Աֆղանստանում եւ Իրաքում դառնում էր էլ ավելի բարդ ու խճճված, այնքանով ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցներն ի զորու չէին լինում ապահովել անվտանգությունն ու կայունությունն այդ երկրներում, որոնք արդեն գտնվում էին, Սալվադոր

Դալիի խոսքերով՝ «քաղաքացիական պատերազմի նախագագանան մեջ»: Իրանն սկսեց թեւերը փռել ողջ տարածաշրջանի վրա: Նա արդեն չէր երկյուղում իր տարածք ամերիկյան զինուժի ներխուժումից, որը կրելով կորուստներ՝ ավելի ու ավելի էր խրվում Իրաքի ու Աֆղանստանի ռազմաքաղաքական անկայունության ճահճում:

Այս ամենով հանդերձ, Իրանի համար խնդիր է մնում Իսրայելը: ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի նախաձեռնած հզոր հակա-իսրայելական կամպանիան ստեղծեց հարմար քարոզչական մթնոլորտ՝ Իսրայելի դեմ առավել էական գործողությունների համար:

Սիեւնույն ժամանակ, 2006թ. ամռանը «իրանական միջուկային թղթապանակի» շուրջ կացությունն Իրանի համար աննպաստ դարձավ: ՄԱԿ ԱԽ հինգ մշտական անդամները (Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան), ինչպես նաեւ Գերմանիան, Իրանի ռազմական նուկլեարիզացումը (միջուկայնացում) կասեցնելու հույսով՝ էլ ավելի սերտացրին իրենց դիրքորոշումները: «Մեծ ութնյակ»-ը Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովում նույնպես պաշտպանեց Իրանում միջուկային զենքի հայտնվելը կանխելու համատեղ գործողությունները: Եվ վերջապես, ԱԽ-ն ընդունեց թիվ 1696 բանաձեւը, որը կարգադրում էր Իրանին դադարեցնել ուրանի հարստացման գործընթացը: Ճիշտ է, սկզբից եւեթ պարզ ու հասկանալի էր, որ Իրանը չի պատրաստվում այն կատարել: Սակայն այժմ ՄԱԿ ԱԽ-ն իրավունք ունի թեհրանից պատասխան պահանջել: Չէ՞ որ ներկայումս ԻԻՀ-ն իրավաբանորեն հանդիսանում է ԱԽ բանաձեւը խախտող: Իսկ ՄԱԿ որոշումների խախտողի կարգավիճակն անչափ տհաճ կարգավիճակ է՝ հղի ամենալուրջ հետեւանքներով:

Անշուշտ, ԻԻՀ հակառակորդների միջեւ իսկական միասնություն չկար, որից անչափ հմտորեն օգտվեց եւ օգտվում է իրանական դիվանագիտությունը՝ ձգձգելով բանակցությունները, փոխելով դրանց ձեւաչափը, պայմանները եւ այլն: Բայցեւայնպես, ընթացիկ տարվա ամռանը թեհրանին անհրաժեշտ եղավ մի կողմից՝ համաշխարհային քաղաքականության ստվերում պահել իր միջուկային խնդիրը, մյուս կողմից՝ ցուցադրել Իսրայելին, որ նա տարածաշրջանում ամենագոր չէ:

Գործի մեջ մտավ իրանամետ «Չիզբալլահ» կազմակերպությունը՝ պատերազմ սանձազերծելով իսրայելա-լիբանանյան սահմանում: Քաղաքագետներն այսօր տարակարծիք են. կա՞ն «Չիզբալլահի» այդ գործողությունը թեհրանի անմիջական հրամանով էր, կա՞ն դա Իրանի լուռ համաձայնությամբ իրականացված՝ կազմակերպության ղեկավարության անձնական նախաձեռնությունն էր: Բայց ցանկացած դեպքում

Էլ Լիբանանի տարածքում Իսրայելի ու «Հիզբալլահի» միջև պատերազմը ձեռնտու էր Իրանին: «Հիզբալլահը» Իսրայելի հետ պատերազմից դուրս եկավ բավական ամրապնդված, թեև կորցրեց իր մարտիկներից շատերին, սպառազինություն, զիջեց իր տարածքային դիրքերը՝ Լիբանան-իսրայելյան սահմանագծից նահանջելով մի քանի տասնյակ կիլոմետր: Սակայն բարոյական, գաղափարախոսական տեսանկյունից, նա ամրապնդվեց Էլ Լիբանանում, Ե՛լ ողջ Մերձավոր Արևելքում, ինչը հանգեցրեց ամբողջ տարածաշրջանում Իրանի հեղինակության ամրապնդմանը:

Իրոք, վերջին ամիսներին ԻԻՀ հեղինակությունը զգալիորեն աճեց: Դրան օժանդակեցին տարածաշրջանում (Իրաք, Աֆղանստան) ԱՄՆ ապաշնորհ քաղաքականությունը եւ, մասնավորապես, ողջ մահմեդական աշխարհում դժգոհություն առաջացրած՝ Մեծ Մերձավոր Արևելքի ժողովրդավարացման ամերիկյան «փրկչական» ծրագիրը: Մահմեդական աշխարհը համերաշխվել է Արևմուտքի՝ առաջին հերթին ԱՄՆ-ի դեմ, որոնց գործողությունները տարածաշրջանում դիտվում են (առաջին հերթին՝ այսպես կոչված «մահմեդական փողոցի» կողմից) որպես ոտնձգություն մահմեդականների ինքնության եւ անկախության դեմ: Ի պատասխան՝ հետեւեց իսլամական դիմադրությունը տարբեր ուղղություններով: Հենց այդ պատճառով Իրանը, կրկին բարձրացնելով հիմնական «շեյթանների»՝ ամերիկյան իմպերիալիզմի ու սիոնիզմի դեմ պայքարի դրոշը, դառնում է հակաարեւմտականության առաջնորդ, մահմեդականների շահերի համար պայքարի առաջամարտիկ:

Սակայն, վերջին տարում Թեհրանի կողմից ծավալված հզոր PR կամպանիան՝ ուղղված Իրանի դիրքավորմանը՝ որպես ամերիկյան իմպերիալիզմի ու սիոնիզմի դեմ ազատագրական պայքարի համաշխարհային առաջնորդ, իսլամի եւ ողջ «երրորդ աշխարհի» հիմնական պաշտպան, արդյունավետ եղավ, թերեւս, սոսկ «մահմեդական փողոցի» համար (այն էլ իրանական հակաարեւմտականության համատեքստում): Տարածաշրջանի արաբական երկրների մեծ մասը զգուշավորությամբ է վերաբերվում ԻԻՀ քաղաքական ու ռազմական առաջատարությանը: Նրանք ամենեւին էլ չափազանցված չեն «իրենց Արաբական ծոցում» եւ, ընդհանուր առմամբ, ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում Իրանի դիրքերի ուժեղացմամբ: Ի դեպ, հենց այդ պատճառով Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան ու Հորդանանը իսրայելա-լիբանանյան սահմանում ռազմական գործողությունների սկզբից անմիջապես հետո հանդես եկան «Հիզբալլահի» դատապարտմամբ եւ ոչ պաշտոնական կարգով Միացյալ Նահանգներին համոզում էին՝ տալ Իսրայելին այդ կազ-

մակերպության հետ հաշվեհարդար տեսնելու հնարավորություն:

Որոշ արաբական վարչակարգերի նման պահվածքը բացատրվում է «Յիզբալլահի», «Յամասի», «Մուսուլման եղբայրների» տիպի արմատական խմբավորումների հետ հին հակամարտությամբ, ինչպես նաև Իրանի կողմից աջակցվող շիաների դիրքերի ուժեղացմամբ. սուլունների կարծիքով, իրանամետ շիաները սպառնում են մերձավորարեւելյան տարածաշրջանում եւ մահմեդական աշխարհում ուժերի ներկայիս դասավորությանը, որտեղ գերիշխում են սուլունի ուղղվածության համայնքները:

Այս ամենով հանդերձ, ԻԻՅ շուրջ առաջանում է պարադոքսային իրավիճակ. Իրանի դերի անտարակույս մեծացման, գործնականում նրա հզորության ամրապնդման պայմաններում Թեհրանն ակնհայտորեն զգում է դաշնակիցների պակաս եւ առաջին հերթին՝ Մերձավոր Արեւելքում:

Իրոք, ո՞ւմ է կարելի այսօր ներառել ԻԻՅ տարածաշրջանային դաշնակիցների ցանկում: Թերեւս, միայն Սիրիային: Ճիշտ է, չի կարելի մոռանալ «իրանական հինգերորդ շարասյան»՝ տարածաշրջանի երկրների մեծ մասում գործող բազմաքանակ շիական համայնքների մասին: Եվ իհարկե, «Յիզբալլահի» մասին: Անշուշտ, այս ամենը բավական հզոր ուժ է, սակայն բացահայտորեն բավարար չէ Իրանի տարածաշրջանային եւ, ասենք, համաշխարհային ամբիցիաները բավարարելու համար:

\* \* \*

Եվ այդժամ եկավ ՉԵՇ ժամանակը: Վերջին ամիսներին Թեհրանն այն դարձրել է իր արտաքին քաղաքականության հիմնական օբյեկտներից մեկը: Եվ պետք է ասել՝ այդ գործնական ընտրությունը խիստ հաջող էր:

Չայտնի է, որ չմիացած երկրները, դժգոհ աշխարհում իրերի ներկայիս վիճակից, իրենց տնտեսական կացությունից, ձեւավորված միաբեւեռ համակարգից եւ ԱՄՆ գլոբալ առաջատարությունից, ՉԵՇ Չավանայի 14-րդ կոնֆերանսում հանդես եկան բացահայտ հակամեթոդիկյան եւ, ընդհանուր առմամբ, հակաարեւմտականության դիրքերից: Կոնֆերանսի կողմից ընդունված բոլոր փաստաթղթերն այս կամ այն չափով արտացոլում էին այդ գաղափարախոսությունը, որը գործնականում ամբողջությամբ համընկնում է Իրանի այաթոլաների վարչակարգի գաղափարախոսության հետ (հանած իսլամական բաղադրիչը):

Չավանայի կոնֆերանսի աշխատանքների արդյունքում դիտորդ-

ները նշում են երեք պահ. ա) ամերիկյան քաղաքականության լատինաամերիկյան ու մերձավորարեւելյան հակառակորդների մոտ ձեւավորվեց քաղաքական եւ գաղափարախոսական ընդհանուր պլատֆորմ, բ) ներկայիս ՉԵՇ-ում ի հայտ եկավ գաղափարախոսության «իրանական» տարբերակի գերակայությունը, ինչը վկայում է աշխարհի ամենալայն լսարաններում ամերիկյան էքսպանսիային «դիմադրելու» գաղափարների արդյունավետ հաղորդման մասին, գ) արդյունքում ձեւավորվեց ՉԵՇ շատ ավելի արմատական (խիստ հակաարեւմտյան շեշտադրմամբ) տարբերակ, քան մի քանի տարի առաջ էր:

Սակայն ոչ միայն այս պահերով է պայմանավորված Իրանի ակտիվությունը ՉԵՇ-ում: Ինչպես հայտնի է, շարժման ակունքներում, նրա ղեկին կանգնած են եղել հետպատերազմյան ժամանակաշրջանի առաջին տասնամյակի փայլուն քաղաքական այրեր, նշանավոր պետական գործիչներ, համաշխարհային մասշտաբի լեգենդար առաջնորդներ՝ Յնդկաստանի վարչապետ Ջավահարլալ Ներուն, Ինդոնեզիայի նախագահ Ահմեդ Սուքարնոն, Յարավսլավիայի նախագահ Իոսիֆ Բրոզ Տիտոն, Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը:

Ներկայումս ՉԵՇ-ում դիտվում է նման մակարդակի քաղաքական գործիչների որոշակի պակաս: ՉԵՇ առավել զարգացած 10 երկրների՝ Արգենտինայի, Բրազիլիայի, Յնդկաստանի, Ինդոնեզիայի, Սինգապուրի, Մալայզիայի, Պակիստանի, Եգիպտոսի, Յարավաֆրիկյան Յանրապետության, Չիլիի եւ մի քանի այլ պետությունների հեղինակավոր առաջնորդները, անկեղծորեն ասենք, առանձնակի ուշադրություն չեն հատկացնում ՉԵՇ-ին, այլ իրենց գլոբալ խնդիրները լուծում են նրա շրջանակներից դուրս: Դեռ ավելին, նրանցից յուրաքանչյուրը փնտրում է (եւ գտնում է) հետինդուստրիալ հասարակությունում ինտեգրվելու սեփական ուղիները: Բայց, այնուամենայնիվ, քվեարկելով կոնֆերանսի համատեղ ընդունած փաստաթղթերի օգտին՝ ՉԵՇ զարգացած երկրները պարզապես Արեւմուտքին հիշեցրին ներկայիս համաշխարհային կարգի բարեփոխման (անշուշտ՝ իրենց շահերից բխող) հրատապ անհրաժեշտության մասին:

Այսպիսով, ՉԵՇ ընդհանուր արմատական միջավայրում առաջացավ նրա առաջնորդների հակաիմպերիալիստական ակտիվության վակուում: Դրանից չէին կարող չօգտվել այնպիսի հակաամերիկանիստներ, ինչպիսիք են Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը, Բոլիվիայի նախագահ Էվո Մորալեսը, ԻԻՅ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը:

Իհարկե, այդ «հակաամերիկյան կապում» հարկ է չմոռանալ Կուբային, որը՝ ղեկավարությամբ ծեր եւ վատառողջ, սակայն

ամերիկյան իմպերիալիզմի դեմ պայքարի նույն աննկուն նահապետ Ֆիդել Կաստրոյի, երեք տարով ընտրվեց ՉԵՇ նախագահող: Այն, որ ՉԵՇ 14-րդ կոնֆերանսն անցկացվեց Կուբայում, որը շուրջ կես դար դիմակայում է Միացյալ Նահանգներին, ինչ-որ տեղ նաև խորհրդանշական էր:

Հենց Հավանայում այդ պետությունների ներկայացուցիչները ստեղծեցին հակամերիկյան դաշինք, թեև սկիզբն ավելի վաղ էր դրվել: 2006թ. ապրիլին Հավանայում Կուբայի, Վենեսուելայի եւ Բոլիվիայի միջև կնքվեց համաձայնագիր «Բոլիվարյան այլընտրանքներ Ամերիկային», ըստ էության, հակամերիկյան միության ստեղծման մասին: Այդ երկրների առաջնորդները դարձան ոչ միայն դաշնակիցներ, այլև մտերիմ բարեկամներ:

«Եռյակ միությանը» ոչ պաշտոնապես միացավ նաև Իրանը: Ուշագրավ է, որ Ուգո Չավեսը հինգ անգամ այցելել է Իրան: Վերջինը՝ այս տարվա հուլիսին: Այն ժամանակ պարոն Չավեսը երկկողմ հարաբերությունների զարգացման մեջ ներդրման համար արժանացավ իրանական պետական պարգևի:

Հավանայի կոնֆերանսի ավարտից անմիջապես հետո ԻԻՀ նախագահ Ահմադինեժադն այցելեց Վենեսուելա, որտեղ երկու երկրների նախագահները ստորագրեցին համատեղ քաղաքական հռչակագիր եւ տնտեսական համագործակցության մասին 29 համաձայնագիր: Վենեսուելայում իրանական ներդրումների ծավալը կազմում է 1 մլրդ դոլար, նախատեսվում է դրանք հասցնել մինչև 9 մլրդ դոլարի:

Իրենց ելույթներում երկու առաջնորդները միմյանց կոչեցին «եղբայրներ ու հեղափոխականներ»: Երկու պետությունների սրընթաց մերձեցումը, որը վերաճել է նրանց առաջնորդների սերտ բարեկամության, հիմնվում է ԱՄՆ-ին դիմակայության վրա: Թեհրանն ու Կարակասը այս գերտերությանը մեղադրում են իր կարգերն ուրիշներին պարտադրելու եւ ինքնատիպ քաղաքակրթություններն ավերելու մեջ:

Սակայն, լայնորեն գովազդվող իրանա-վենեսուելա-կուբայական բարեկամությունից զատ, գոյություն ունեն նաև այդ պետությունների ոչ հրապարակավ կապեր: Ըստ DEBKAfile տեղեկատվական կայքի հետախուզական տվյալների, Հավանայի գազաթափողվի ժամանակ կայացել են երեք երկրների հետախուզությունների ներկայացուցիչների եւ փորձագետների փակ հանդիպումներ ու բանակցություններ, որտեղ պարզաբանվել են ընդհանուր նպատակին հասնելու համար սերտ համագործակցության հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, Իրանի, Վենեսուելայի, Կուբայի, ինչպես նաև

Բուլիվիայի մերձեցումն ինչ-որ տեղ արտասովոր չէր լինի, եթե չլինեին մի քանի փոխկապակցված հանգամանքներ:

*Առաջին:* Իրանի ձգտումը համաշխարհային առաջատարության: Այս տարվա սեպտեմբերին Սենեգալում Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն ազդարարեց, թե Իրանը համաշխարհային առաջատարի դերն ավելի լավ կարող էր կատարել, քան դա անում է Միացյալ Նահանգները... «Իրանը բնական համաշխարհային առաջատար է: Մեր գաղափարախոսությունը հիմնվում է օրենքի եւ արդարության վրա, եւ մենք կարող ենք աշխարհը մեր հետեւից տանել ավելի լավ, քան դա անում է ԱՄՆ-ը», – հայտարարել է Ահմադինեժադը:

*Երկրորդ:* Իր առաջատարությունն Իրանը փորձում է ապահովել ազգային միջուկային ծրագրի զարգացման հաշվին, որը հղի է ԻԻՅ-ում միջուկային զենքի հայտնվելու վտանգով: Մեկ տարի առաջ, Իրանում գալով նախագահական իշխանության, Ահմադինեժադը միջուկային ծրագիրը դրեց ազգային գաղափարի աստիճանի: Նա եւ իր թիմը այդ գաղափարի քարոզման ուղղությամբ հմուտ PR կամպանիա են անցկացնում ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում: Թեհրանին հաջողվել է իր ազգային միջուկային ծրագիրը ներկայացնել որպես արդարության եւ բոլոր՝ առաջին հերթին չմիավորված պետությունների ժողովուրդների իրավունքների համար պայքարի զենք: Այն Թեհրանին հնարավորություն է տալիս ստանալ նոր քաղաքական դիվիդենդներ՝ նախելառաջ «երրորդ աշխարհի» երկրներում:

*Երրորդ:* Շնորհիվ Կուբայի, Վենեսուելայի, Բուլիվիայի, Սիրիայի ջանքերի, իրանական միջուկային ծրագիրն արժանացավ ՉԵՇ հավանությանն ու աջակցությանը: Դրանում մեծ դեր խաղաց Ուզո Չավեսը: Իրանին լիակատար աջակցություն հայտնեց նաեւ գազաթափողվել կած հյուսիսկորեական խորհրդարանի նախագահ Կիմ Յանգ Նամը:

Արդյունքում՝ շարժման 14-րդ կոնֆերանսում Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ընդունվեց հատուկ հռչակագիր: Այնտեղ գործնականում լիովին արտահայտված է տվյալ խնդրի նկատմամբ իրանական դիրքորոշումը:

*Չորրորդ:* ՉԵՇ պաշտոնական եւ ոչ պաշտոնական առաջնորդներ դարձան առավել արմատական երկրները՝ Կուբան, Իրանը, Վենեսուելան, Բուլիվիան: Հեռանկարում դա կարող է հանգեցնել շարժման ավելի քաղաքականացմանը եւ անգամ նրա արմատականացմանը: Նոր

սառը պատերազմի ծագման իրական հնարավորություն է առաջանում արդեն ոչ թե «Արեւելք»–«Արեւմուտք» ազիմուտով, այլ «Յյուսիս»– «Հարավ» գծով:

*Հինգերորդ:* Իրանը ՉԵՇ շրջանակներում հասավ իր գաղափարախոսության եւ քաղաքականության համաշխարհային ճանաչմանը: Իսկ դա ՄԱԿ բոլոր անդամների գրեթե 2/3-ն է, երկրագնդի բնակչության 51%-ը, նավթի համաշխարհային պաշարների 86 %-ը:

*Վեցերորդ:* ՉԵՇ շրջանակներում, ի դեմս Արեւմուտքի քաղաքականությանը դեմ տրամադրված երկրների, Իրանը ձեռք բերեց նոր դաշնակիցներ:

Այսպիսով, ՉԵՇ ներսում ներկայիս քաղաքական դասավորության պայմաններում, նկատի առնելով Իրանի աճող ֆինանսական, տնտեսական եւ ռազմական կարողությունները, ինչպես եւ միջուկային տերություն դառնալու հեռանկարը, միանգամայն հավանական է երեւում ԻԻՀ վերածումը ոչ միայն տարածաշրջանային, այլեւ համաշխարհային առաջատարներից մեկի: Ընդ որում, Իրանի համար ՉԵՇ-ն իր հավակնոտ ծրագրերի իրականացման յուրատեսակ «տանիքի» դեր է խաղալու:

[www.iimes.ru](http://www.iimes.ru)

(Մերձավոր Արեւելքի ինստիտուտ)



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Սարգիս Հարությունյան</b>	
<b>ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>1</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ</b>	
<b>ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>7</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b>	
<b>ՎՐԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ</b>	
<b>ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ</b> .....	<b>11</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b>	
<b>ՌՈՒՄԱՍՏԱՆ – ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ.</b>	
<b>ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ</b> .....	<b>15</b>
<b>Սուրեն Սարյան</b>	
<b>ԵՎՐՈՊԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՄԻՋԵՎ</b> .....	<b>21</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b>	
<b>ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b> .....	<b>27</b>
<b>Վլադիմիր Սաժին</b>	
<b>ԻՐԱՆԸ ԵՎ ՉՄԻԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ</b> .....	<b>32</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Սիփան լեռը  
(Մանազկերտի դաշտից)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: